

I consider
young muskrats
Young mink

ՆՈԽԾՈՒԹՅԱ

ՎԵՏԱԿՈՒԱՆԴՈՒՅՑ

ԱԿՆԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԱՅ

ԱՌ ԱԿՆՅԻ ԵՒ ՀԱՄՕՐԵՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ

Ա.ԶԳԱՅԻՆՍ

ԳՐԵՑ


ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴ. ՓԱՓԱՅԵԱՆ

ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏՑԻ

Կ. ՊՈԼԻԾ

ՅԳԵԳԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԵԼ. ԿԱՐ

1875



ՅՈՒՐԴՈՒՐԱԿ

ԱՌ ՀԱՅԱԶԴԻ ԲՈՂՋԻԱԿԱՆԸ

ՅԱՌԱԶԱՐՄԱՆ

Ժառանակի մը Ակնոյ քաղաքը քարողիչ զըտ-
նուելսկի քանի մը մասնաւոր անձանց բողոքա-
կան ըլլալուն լուրջ առի ալ նէ շատ հոգ շըրի առ
դիտմամբ՝ որ առկաւաթիւ ըլլալսկ՝ կարելի է որ
կամ բարեսպաշտութեան ոգւավ խարուած, կամ
աշխարհային շահու մը ետևէ ինկած րվան, և քա-
հանայից և ուրիշ իրենց բարեկամանց և աղդակա-
նաց յորդորանօրը վերստին Սուրբ Եկեղեցւոյ զիր-
ելը դառնան :

Այս կարծիքին առոյդ չ'եղելն խմանալով՝ ոյն
ատենէն անսնք ուղղութեան յորդորելու ժայթ չը-
նելսւ վրոյ գղջացայ, և ոյս անհոգութեանա դար-
ման մը տանելու համար մէկ յորդորական նամակ
մը զրկեցի անսնոյ՝ կոստանդնուպոլիսին :

Այս նամակիս ուստասխան մը զրեր էր Ակնոյ
քաղաքականներուն կողմէն անսնոյ քարողիչը Մար-
տիրա Խղնատիոսեան, որ թէսլէտ 1872 ին Ասլիլ
ամսոյ մէջ զրուած էր, բոյց օրինակին մէկը Կոս-
տանդնուպոլսոց բողոքականաց ձեռքն համելով՝
կամ ըռան հեղինակն եղող քարողիչն յատկապէս

զրկուելով տպուեցաւ ներկայ 1875 թուականիս ,
որոց սկիզբը կարծիք մը յայտնելով , որպէս թէ ես
իմ առաջին դրած յորդորակս սլաշտանելու ան-
կարող ըլլուլովս , անսոց զիրն առանց սլատա-
խանւոյ թողած եմ , ոյն յորդորակս ալ հեաը մէկ-
աել տպած են , բայց կրատելով ինչոքս որ հե-
ղինակը աետրակին գլուխը դրած Ազդին մէջ կը-
ծանուցանէ ըսելով « յորդորակին քանի մը կտոր-
և ներն ալ , որ պատճական բաներ են կամ նկա-
« բազիրմեր՝ դուրս ձգուեր , և ճարտասանական
« ձեւերն կետերով ցուցուեր են 'ի համուռոտութիւն ,
« զի մի տպագրական ծախքն առաւելու » : Ա. Եր-
ջին բերած պատճառն ամենաօչինը ըլլուը ամէն
մարդ զիահէ , երբ մտածէ որ շատ մը բաւական
ընդարձակ զրբեր տպած և անանկ դնող մը ծա-
խած են՝ որ չէ թէ տպագրութեան ծախքը , այլ
և ո՛չ սլաքոցնելով ծախողներուն վարձը չ'ելէր ,
որ հեռաւ կամ մօտ ցամաքային կամ ծովոյին ճա-
նապարհորդութիւններ ալ ընելով՝ ճանապարհի
ծախք և ակրութեան գանձուն մօքս ալ տպալու կը-
սլաբառաւորին . և այսպիսի զրբերը շատ աեղ ալ
ձրի կը բաժնեն : Այս նոր տպած տետրակինին ար-
դէն 36 կամ 40 երես բան ըլլուլով՝ յորդորակին
ամբողջ տպուիլը սեղենք թէ մինչեւ 70 կամ 80
երեսը հաացնէր , ծախքը չ'աւելնալու համար դուքս
ձգուելուն սլատանու չէր կրնար ըլլուլ , վասն զի
հիմա՝ որ իրենց այս ըսածին նայելով այս տետրա-
կը չահաղիտութեամին ծախսելու ելած սիմի ըլլան

հօ տկան վարաց , որ կը ծախեն , զորդորակը առանց կրծատելու տպածնին կրնային 80 վրցի ծախել , Եւ թէ որ աժան ծախած կամ ձրի տուած զրգերնին կարդացողին օգտակար բան մը սեսլելով անոր օգտին համար իրենք ալ դրամական զոհովութիւն կ'ընեն . այս ենթազրութեամբ սվիտի կրնանք ըսել թէ , այն տեսրակին , զոր իրեւ մեր յորդուրակին սպառափառան կը հրատարակեն , անօգուարվակն իրենք ալ գիտցեր են :

Ըսածնին ինքնին ճշմարիտ ալ է նէ , Յորդուրակը կրծատելու ուրիշ գաղտնի սրատճառ մը զըտած են իրենց մէջ , և ասիկաց ուրիշ բան չկրնար բլլալ , բայց եթէ զուրս ձգած կտորներնուն ներշ քին հանգամանքը : Առնիք երկու տեսակ են . մէկը՝ սրատմական բաներ կամ նկարագիրներ , և միւսը՝ ճարտասանակոն ձևեր : Այս վերջին տեսակն՝ կարգացողը համոզելու ձևեր են , և այն որ այն զըրտածք կարդացողին համոզուիլը չուզեր՝ այն ձևաւոր զրուցուածքը վերցնելը հարկ կը սեսլէ . բայց ասոնց մեծ կարեորութիւն մ'ալ չտալով , վերցուցած խօսքին տեղը կետաղբութեամբ կը նշանակէ : Առաջին տեսակը այնպէս չէ , և այնակէս չըլլայլը սրատափառուոյն հեղինակն ալ կահած է , որ ասոնք վերցուցած տեղը անյայտ կ'ընէ : Յորդորակ զրելը , սրատմութիւն զրել չէ . սրատմական բաները կամ նկարագիրները յորդորակի մէջ մտնելունին սրաբառ թուզիթ լեցունելու համար չըլլար , ի հարկէ այն սրատմութիւնը կամ նկարագիրը՝ զըրտածք :

ուածոյն մէկ խօսքը զօրացնելու կամ հակառակ կողմը տիտրացնելու համար վաստի տեղ կը ծառացէ , և պատմութենէ առնուած վաստերը՝ ուրիշ աղբիւրներէ առնուածներէ աւելի զօրաւոր են . առոր համար է որ՝ մարդ խարելու համար զրիչ ձեռք առնող մարդոց մէջ խխառ քիչ կը գտնուի որ պէտք եղած տեղը պատմութեան կամ բուն հիմանը կամ կարեւոր պարագաներուն մէկին խարդախութիւն չընէ : Ասոր համար 'ի հաւասոս կամ կածելի մարդոց շինած պատմութիւններէն ալ ըգդուշանալ պետք է :

Այսքանա տպեալ տետրակինն համար բաւաց կան սեսլելով խօսքերնիտ կ'ուղղեմք հիմոյ ոչ միայն Ակնայ բողոքականներուն՝ որոց վիժարէն ողատառ խանատու ըրեր է զինքը անոնց յարդի քարոզիչը , ինչորէս որ իրաւունքն ալ կը պահանջէր , ոյլ և առհասարակ ամէն հայազգի բողոքականներուն կը խօսիմք , միայն թէ հաւատալեաց վրայօք մէջերնին հերձուած և տարածութիւն չ'ըլլայ՝ որ անհընարին չ'երեւեիր մեղի , քանի որ՝ ամէն մարդ իր հաւատքը չէ թէ ուրիշ մարդէ մը ոյլ իր առանձին խելքին դատումովը Ս. Գրքէն պիտի սորմի :

ԲՈԼՈՐ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԳԻՑ

Գրած պատավաննիդ՝ զօր ամէնուղ կողմէն
ներկայացնել ուղեց արժանայարդ քարոզիչնիդ,
ձեր ըստ հոգւոյ վտանգաւոր կայութեան վրայ ու-
նեցած տրտմութիւնս քիչ մը թեթեցուց : Միշտ
կ'ազօթէի առ Աստուած և հիմնյ ալ ամէն ժամա-
նակ փափարս այն է ոչ միայն ձեզի համար որ
Ակնայ քաղաքը և վիճակը կը բնակիր, այլ ուր
որ իսան հայաղզի եղբարք որ բողոքականութեան
վտանգաւոր որոգայթից մէջ ինկած են, որպէս զի
մարդասէրն Աստուած ճշմարիտ հաւատոյ դուռը
շը գոյցէ անոնց ասաւջը, այլ կայծ մը մնայ, որպէս
զի անիկայ Աստուածային նախախնամութեան սո-
վորական ճանապարհովը նոյնը արծարծէ և լուսա-
ւորէ, և հոգեոր ճանապարհին իրենց առաջնորդ
եղող Ս. Եկեղեցոյ վարդապետութեան և հըրա-
հանգացը հետեւող ըլլան . աղէկ և հաստատասէս
համոզուելով որ նոյն Եկեղեցին մինչև աշխարհիա
վերջը սիստի մնայ, որ ամէն անոր զիրկը դիմողնե-
րուն յաւիտենական փրկութեան ճանապարհն է . ոչ
պիտի վերջանայ, և ոչ Աստուածոյ ցըցուցած ճա-
նապարհն ալիսի շեղի, և ասոր այսալիսի ըլլալուն
երաշխատոր ունիմք զնոյն ինքն Տէրն մեր, որ իւր
փրկարար չարչարանացը և աշխարհակեցոյց մահ-
ուան նախորդ զիշերը սուրբ հաւատոց քարոզիչ

սուհմանած առաքեալներուն խօսացաւ զՀողին
դրկել՝ որ ամենայն ձշմարտոթեամբ առաջնորդէ
Եկեղեցւոյն՝ որ անոնց ձեռօքը և աշխատոթեամ-
բը պիտի հաստատուէր, և աշխարհի վրոյ ձշմար-
տութեան սիւն և հաստատոթիւն պիտի ըլլոր.
և ինչ տեսակ զօրաւոր կամ խարդախ և նենդաւոր
թշնամիներ ալ ունենար, թէ և գժովսիքի գուռ ըո-
ւելու չափ զօրաւոր ըլլային՝ անոնցմէ պիտի չը
յազթուէր ։ Աենք այսպիտի երաշխաւորութեամբ
խօսացուած սյս խօսքերուս կատարեալ կը հա-
ւատամիր որով Եկեղեցին առաջնորդէլու համար
Հոգին սուրբ Աստուած դրկել խօսացող Տեսան
մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուած ըլլալուն նը-
մանապէս հոգւոյն սրբոյ ալ Աստուած ըլլալուն կա-
տարեալ հաւատալնուս համար ամենայն վստահու-
թեամբ գիտեմք որ Տէրն մեր իր խօսումը կտ-
արեց . և Հոգին Սուրբ ալ չթողաւր որ իւր տ-
ռաջնորդած Եկեղեցւոյն մէջ մոլորութիւն մտնէ ու
արմատանայ ։

Չեր պատախանովը մեր տրտմութիւնը թե-
թեանալը սյն էր՝ որ Եւրոպացի և Ամերիկացի բո-
զորականներուն կատարեալ հետեւող չ'էք՝ որ միայն
Ս. Գիրքը հաւատոյ և բարուց կանոն բոնելով
նախնական սրբազնն աւանդութիւնները կը մեր-
ժեն . ոչ Եկեղեցւոյ վարդապետութիւնը և ոչ ժո-
ղովրի վիրայութիւնը կ'ընդունին . ասոնք ամենքն
ալ սիսալած են կ'ըսեն ։

Եւ որովհետեւ ասոնց միաւթիւնն է Եկեղեցւոյ

ուստուցիչը, և Եկեղեցւոյ լրաթիւնը տառնցմէ և ու-
սոնցմէ ուսանող ժողովրդէն կը բաղկանայ, բնա-
կանարար ճիշդ հետևութիւնը ոյն կ'ըլլոյ որ՝ Հո-
ղին սուրբ Աստուած մինչև աշխարհիս վերջը ա-
մենայն ճշմարտութեամբ Եկեղեցւոյն տուածնորդէ-
լու չէ կարողացեր՝ որ մոլորութեան և սխալտնաց
մէջ լնկեր է. և կամ՝ Տէրն մեր Քրիստոս՝ իր Ա-
ռարինը և մարդկային կեանքը դժնդակ չարչարա-
նօր մարդոց համար փրկութեան զոհ մատուցանե-
լով հաստատած Եկեղեցւոյն տուածնորդէլու դրկել
խոստացած Ա. Հոգին չ'դրկելով այնպէս բան մը
ըրեր է՝ որ նմանն ընտղ չգտնուիր հասարակ մար-
դոց մէջ. այլ ամինն ալ կուզեն որ մէկ բան մը
մշտառե ըլլալու սահմանեն նէ՝ անոր չ'աւելուե-
լուն կերպն և միջոցը հոգալու մտադիր ըլլան :

Եկեղեցին կը սխալի և սխալած է ըստղները
սոյն հետևութենէն աղատելու համար՝ զոր քրիստո-
նէի անուն կրող մէկը չ'կընար ընդունիլ, ճամբար-
ներ գտած են, և ինձի ախտանիք մը այն է՝ որ
դուք այդ ճամբաներնուդ կարօտ չ'ըլլալ կը ցուցը-
նէք զձեզ։ Թէպէտ վերսիչետը բողոքականաց կը
համաձայնիք ըսելու թէ Եկեղեցին սխալած է,
բայց այս սխալ կարծածնիդ ալ դարձեալ նոյն Ե-
կեղեցւոյն վկացութեամբը շտկել կուզէք։ Եւ այս
ըսածիա կը վկայէք հետեւեալ կերպով։

Աենք յորդորակին մէջ ձեզի հարցուցեր էինք
թէ « Եկեղեցին աւետարանին ի՞նչ հակառակ բան
առնի », ասոր սա սկատասիսանը կուտաք. « այս մու-

և օվին մեր տեսութիւնը սխալ չհասկցուելու համար
ոլէտք է յիշել՝ թէ բւսառոշշան Եկեղեցւոյ ներ-
ակաջ դրուքիւնը կամ վիճակիլ ըսելով կ'իմանտակք
ոտասներորդ դարէն 'ի վեր տեսնուած՝ Եկեղեցւոյ
և այն վարդապետութիւններն և սովորութիւններն՝
« զորս Եկեղեցին ընդուներ է 'ի դիրա և յարաբառա-
շեանեալն օրինակելին առաջ աս երկու դիտողու-
թիւններս նշանակել հարկ կը սեպեմ։ Նախ ես ա-
ռանց մասնաւորելու հարցումն ընդհանուր կերպով
ըրած եմ՝ « Եկեղեցին Աւետարանին հակառակ ի՞նչ
ունի ըսելով ինչպէս որ դրած էք ։ Գոք մաս-
նաւորապէս Հոյոց Եկեղեցւոյն վրայ բերելով կ'ե
պատասխանէք ։ սրից որիշ հարցում մը կը ծա-
գի ։ Հայոց Եկեղեցին ընդհանուր Եկեղեցւոյն բար-
կացուցիչ մէկ մասն բլլալով հաւատապիտ ճշմարտու-
թեանց մասին ընդհանուր Եկեղեցւոյ հակառակ ի՞նչ
ունի ։ Միայն ասիրոյ դանելով՝ զոր յաս խոեան
գտնելիք շունիք ։ աւետարանին հակառակ ունե-
ցածն ալ կը նայիք զանել թէ որ կար ։ Երկրորդ՝
Հոյոց Եկեղեցւոյն անխոսուր երթարօյն ժամանակի
սահման մը ըրբոցիք եք տասներորդ դարը ։ այ-
սինքն Փրկչի 901 թւուականէն մինչև 1000 թւուա-
կան անցած ժամանակի միջոցը ։ Կողեմք խմոնտէ
թէ այն առևնոր ի՞նչ արաւորին հզօր ազգեցութիւն
պատահեր է Հոյոց Եկեղեցւոյն առաջին անորա-
տութիւնը յանձնործ հիմնովին ուրելու ։ Յու-
նաց հետ Քաղկեդոնի ժարդոյն պատճառով
եղած վիճը որ հաւատոյ դաւանութեան հետն

բնաւ բան մը շունի , հիմովներորդ գլարումն վերջին
ժամանակները սկսաւ Բարգին կաթուղիկոսին առեւ-
նը : Այս պիտի շ'ըլլոյ ըստծ ազգեցոմի խննիլ :
Լոտինները խաչակիրներուն ժամանակին առաջ
հայոց հետ բան չունեին , միայն առեն մը , այն ալ
մետասաներորդ գլարուն վերջին մօս , յունաց պար-
ուղարառութեանը բանուելավ Հոտվիոց հայրապետ մը
բայց խարաւելին ալ զդաշանալով , այն ժամանակի
հայոց կաթուղիկոս երանելի Գլուխուերին
հարցացեր էր և պատասխան առեր էր թէ Հոտվի
պիտի դամ տիստի , այդ հարցմանցդ բերանով
պատասխան կուտամ : Կոյ մէկ աղանդ մի հայոց
մէկ կոշմը դապտագովի մասծ և բիշ մը առեն
զիմանալին ետքը բնաջինջ եղած՝ Թանդրակեցի
ըստծ աղանդը , որոցմէ ստիրուաթիւ մնացարու-
ներ կը զանուին մինչև հիմու Խընուափ կողմերը և
Պանք ուստղ անունավ կը ճանչցուին , ինչողիս որ
ասկեց շոտ ժամանակ առաջ բալգրականաց Աւեւ-
ատրեր լրազրոյն շղիսեմ որ թառյն մէջ կորդա-
ցնը եմ . և դիմք որ հայոց եկեղեցւոց , ինչուն
ամենայն քրիստոնեայ եկեղեցիներուն ալ սրհոց
յառաջած օրեր կոն զար նոյն եկեղեցւոյ զառա-
կունք կը պահնեն . իւկ բալորուիսնք ոցզտիս բան
չունին . աստի թէ այն կողմին և թէ արիշ մոլո-
րութիւնավիմ Թանդրակեցի բալգրականներուն հետ
նոյն և հայուսառանեացց Եկեղեցին բալգրականներուն օտաք
էն ։ Զեղի հաւատացացեր ևն որիշները՝ թէ և հո-
յոց եկեղեցին Ս . Լուսաւորչին աւանդած հաւատա-

քովը և վարդասկետոթեամբը մնացած չէ : այլ
ետքէն աւրուած է » և որովհետեւ երբ ըլլալը յա-
տուկ զրուցել ալէաք էր , թուական մի ցըցունելու
էր՝ այս ալ ըրին , բայց չկրցին իրարու հետ միա-
բանիլ : Ոմանք կ'ըսեն թէ հոյք Տրիտենդեան ժո-
ղովքէն բանի մը բաներ սորվելով պատական եկե-
ղեցւոյ հետևեցան և անկէց իրենց աղգային եկե-
ղեցւոյն մէջ խառնուրդ մտու : Բայց որովհետեւ
այս ժողովը ժջ . դարուն մէջ եղաւ , երբ հոռվ-
մէականութեան հետևող հոյերը երկու երեք հոր-
իւր տարիէ 'ի վեր Աւնիթոր անուամբ զատուած
ըլլալով , և նոյն գատութիւնը մինչև հիմայ շարու-
նակելով՝ աղգային Եկեղեցւոյ վրայ աղդեցութիւն
չունի , ոմանց ցըցուցած այն ժոմանակը ուրիշնե-
րուն անյաջող երկելով բանը աւելի հինցուցին .
խաչակիրներուն արևելք մտած ժամանակին ձգե-
ցին , որ է Ժ. դարուն սկիզբները . բայց ասոնք
ալ սկիզբները բան մը չկրցան ընել . ետքերը Աւ-
նիթոր անունով հետևող ունեցան ալ նէ՝ անոնց
քրած վտիոխութիւնները որ ժամանակակից պատ-
միշներուն զրածէն զիստեմք թէ ինչ բաներու վրայ
էր . աղգին ընդհանուրին ընդունելի շեղան և եր-
իար ատեն այու խառնուրդը չմնաց . Աւնիթորնե-
րը առանձին հերձուած մի սեպուիլ սկսան : Աւս-
տի անոնց ընդունածն ալ լուաւորչական Եկե-
ղեցին ընդունած չըլլալը տեսնելով ձեր ուրիշ
վարդետները՝ Ժ. դարը ցըցուցեր են իրեւ այդ
խառնուրդին ժամանակ : Եկատակն ըթելով՝ այս Ժ.

դարը տակուին բողոքականաց բերնէն ալ ըստ
չէի՝ զրուածներնուն մէջ ալ կարդացած չէի՝ (թէ-
պէտ ամէն զրածնին ալ չեմ կարդար) :

Այս խօսքա անոր համար քիչ մը երկնցոցի՝
որ հասկնոք թէ բողոքական վարպետներնուդ ա-
ղէլ խելքը կարելով որ մեծ վորկում ոնիք վրա-
նին, և գանանք ամէն բանի հմտա և բաջ քննիչ
և նրբախոհ աստաւածարան և հաւասարիմ և ճրշ-
մարտախօս սրատմարան սեպած էք, ինչ որ մըտ-
քերնին զայ իրենց ազանդը ձեզի կատարելապէս
ընդունել տալու համար՝ սոսցդը կամ սուտը չը
նոցելով կը խօսին, դուք ալ նախասրացարեալ մը-
տօք կ'ընդունիք և ուրիշի չեք հարցներ. վասն զի
ոյն ճարտար վարպետները ստոր ալ սուաջն տռ-
նելու յաջողած են, ուրիշ որ այս բաներա ստո-
դէլ կրնոյին նէ՝ անիկաց իրրեւ անհաւատ մի ցը-
ցանելով, իրենց խորած ժողովուրդը՝ որոց մէջ
դոք ալ գտնուեր էք դժբաղդարար, ոյնալիսինե-
րէն հեռացոցած են: Զեր պատուարժան քարո-
ղիչնիդ չեմ կարծեր որ այդ ճարտար խարտղներէն
ըլլոց, մանաւանդ թէ անոնց խօսքին խարտած և
անոնց ամէն ըստածը առանց քննութեան իրրեւ ճրշ-
մարիտ կըլլով սրարդամիտներէն ըլլոլու նշաններ
կը տեսնեմ ձեր բերնէն զրած պատասխանոյն
մէջ, զորս չպիտի կրնար զրել, զիտնալով որ
հայոց ո և իցէ վարդապետ՝ անոնց վրաց իրմէն ա-
ւելի տեղեկութիւն ունի: Խօսքերնուս կարգաւը
այս խարուած կըտերն ալ կը տեսնեմք, հիմա

ողատոսախանւոյն մնացեալ խօսքը տեսմենք :

«Քանդի կ'ընդունիմք՝ կ'ըսէ՛, թէ մինչեւ այն
ո դարը եկեղեցւոյ մէջ մտած զեղծումները մեծ
արտներ չէին . (այսինքն տասներորդ դարէն ա-
ռ ուաշ . ասիկոյ մոտքէ չհանելը շատ կարևորաթիւն
«ունի) մինչդեռ ՚ի դարէ անտի ՚ի վեր յեկեղե-
ցին մուտ գտած են վարդապետութիւնք և արա-
սրողութիւնք որք ոչ առաքելական են և ոչ նախա-
և հայրական . որ ինչպէս որ պիտի ցուցաւի ՚ի ստո-
«րիւ՝ այնպէս զի շուաւորչան ներկոյ դրութե-
«նէն զատուելովնիս՝ ինքզինքնիս զատուած չենք
«համարիր շուաւորչական նախնի դրութենէ . այլ
անորամուտ մոլորութիւններէ և եղծումներէ :
«Մինչ զի յարմար ևս էր որ ինքզինքնիս շուաւոր-
աշան անուաննեինք քան ո և է անուն : Բայց ո-
«րովհետեւ սյս անունը ազգային ուրիշ մաս մը
«ստանձնեալ ունի . ինչպէս որ նախնեաց ամին
«փառքերն ալ, սկսոք եղաւ մեզ տարբեր ան-
«ուամբ մի կոչուիլ . որ զանազանուինք վերջն
«դրուց դրութիւնն ընդունողներէն :

«Այսու տեսութեամբ, թէև տարբեր անուն
«մի կառնունք, չենք սեպեր թէ եկեղեցախոյսու-
«թիւն կամ ըստ Յորդորակին կրօնախոխութիւն
«ըրած կ'ըլլամք . քանդի հայ աւետարանականաց
«եկեղեցական դրութիւնը աւելի կը յարմարի նախո-
«նի քրիստոնէական լուսաւորչական դրութեան
«քան թէ հայ լուսաւորչականաց » :

Մենք ալ այն կուզեմք . բայց ասած հասկը-

Նալու ենք թէ լուսաւորչական դրութիւն ըսելով
սրբոյն Գրիգորի լուսաւորչին՝ Դ. դարուն սկիզբը
հայոց աղջու քրիստոնէական հաւատոյ լուսով լու-
աւորած առենք թէ իրեն և թէ Ազաթանգե-
ղոսի գրքովը աւանդած հաւատքը կը հասկնայ՝
թէ մշ. դարուն մէջ՝ աշխարհս աւետարանին լու-
սովը լուսաւորելու եկանք ըստդ կուտերին և Կալ-
վինին և Մունադէրին և Ցուխնիլին և ուրիշ բաղ-
մաթիւ և իրարու աննման անձանց հնարած հա-
ւատքը կիմանաց . և թէ որ այս վերջիններուն
համար է խօսքը՝ ոյն ալ դիտնալ կուզենք թէ ա-
տոնց որի՞ն դրութեանը կը յարմարի հոյ աւետա-
րանականաց եկեղեցական դրութիւնը : Այս կաս-
կածը անով մտքերնիս եկած է՝ որ հոյ լուսաւոր-
չականաց դրութեանը չը յարմարելը յայտնի դը-
րած էք . և ասոնց դրութիւնը Ս. Գրիգոր կուսա-
ւորիչ հայրապետի դրութիւնն է :

Աը սիրենք ենթադրել որ ձեր միտքն ալ՝ կը-
րօնականի մասին անոր աւանդած դրութիւններէն
չը զատուիլ է . բոյց խարռւած էք, կարծելով որ
քանի մի բաներ որ հոյ լուսաւորչականք ընդու-
նած են, խոկ հոյ աւետարանականք չեն ընդու-
նիր, Ս. կուսաւորչի ժամանակէն չեն և նոյն սուրբ
հայրապետն աւանդած չէ : Ասոր համար մենք ալ
հիմայ ոչ լուսաւորչական՝ այլ իրրեւ օտարէ հայոց
եկեղեցւոյն մէջ մտածի ալէս ձեր պատասխանւոյն
մէջ ցըցուցած կէտերուն վրայ սլխափ խօսիմք, որ
մեծ բաներ չեն ըստած դեղծումներնեղ ըլլար նէ՝

սատանի բաներու համար աղդին ստանձնուծ լուսա-
ւորչական անունին և նախնեաց ամէն վառքերին
ալ ինքնայժար կամօք դուք ձեզ շէիք զրկեր, և
տղին զատուելավ դուք ձեզի նոր անուն գնելու
շէիք սրարտաւորէր : Այս կէտերաւս վրայ խօսած տ-
աեննիս ըսածնուս հաստատութիւն սլիտի բերեմք
Ա. Գրդին խօսքերէն զատ Ա. Լուսաւորիչին խօս-
քերն ալ, և սասնք ընդունելավ ձեր տուած պա-
տասխանը ետ առնելնէդ կիմանամք թէ լուսա-
ւորչական բառին՝ զր դուք կը դործածէք, վերոյ
նշանակեալ երկու մաքին ո՞րը կաւտար, թէ որ
Ա. Գրիգոր լուսաւորչին աւանդած վարդապետու-
թեանը համար ըսել կուգէք, բերած վկայու-
թիւններս տեսնելնէդ ետքը աղէկ գիտնալով որ
խարտւած էք՝ տուած պատասխաննիդ ետ առնելը
ձեզի ծանր զալու չէ, որովհետեւ անանկ բանի մի
վրայ է որ չը զիտէք, և քանի որ սուրբ եկեղե-
ցին զատուած շէիք և նոքա վարդապետութիւնը
սուրբ սրտիւ և աներկեայ հաւատով կ'ընդունէիք
և նոյնը այլոյ ուսուցանելու սլաշոն մի ստանձ-
նած չունէիք, անիկայ ճշղիւ զիտնալու պարտա-
ւորեալ շէիք . այն ատենը այդ սրարտականու-
թեանը տակ ինկաք՝ երբ որ հաւատոյ առարկանե-
րը հաւատալէն առաջ քննել մտքերնիդ զրիք .
քննելու ստուգը սուտին և անսացզէն որոշելու
այն միջոցը բանելով՝ զոր ձեր ամենագէտ կար-
ծած բարտիչը օտարազգի և օտարահաւատ բա-
րոզիչներէն լսելով և անոնց ըսածին վրայ կարծե-

լով որ այն միջոցը բռնողը չը սխալիր՝ ձեզի ոյդ
գաղափարը հաղորդեց . և դուք ալ տռանց ձեր
մտքին կարողութիւնը դիտնալու նոյնը ընդունելով
անանկ պարտականութիւն մի վրանիդ առիք՝ զոր
կատարելն անհնար էր :

Վարդս սխալական է . և մեծ պարտք մի է
մարդուն իր սխալը ճանչնալին ետքը շխակելը , ա-
ւելի մեծ պարտք է՝ իրեն սխալելովը մոլորեցո-
ցած որիշ մարդոց սխալը շխակելը , և անոնցմէ
յափշտակած ուղիղ հաւատքը անոնց վերադարձը-
նելը , ինչպէս որ մէկուն սեփական ինչըը անիրա-
ւոթեամբ յափշտակողին և իրեն սեփականողին
անհրաժեշտ պարտքն է նոյն բանը իր տիրո՞ջը դար-
ձընելը : Եւ չեմ կարծեր թէ դուք զնեզ մարդ-
կային աղղին մէջ բացառութիւն մի կարծելով ան-
որխալ համարիք . և Հոռվիմայ Պատլին տեղը՝ որուն
անսխալականութեանը հարկաւ չէք հաւատար՝
ամէն մէկերնիդ մէյմէկ անսխալ պասլի տեղ անցնիք :

Բայց սա ալ հարկ է ըսել որ զրով իրեւ պա-
ռասսիան զրածնիդ և իրեւ ամէն ճշմարտասիրի
զիտնալը և ընդունիլը հարկ եղած ճշմարտութիւն
մի տապադրութեամբ հրատարակածնիդ ետ առնե-
լու համար խոնարհութիւն պէտք է , և ասիկայ
սուարինութիւն մըն է և առարինութիւն մի կա-
տարելու համար տատուածային յատուկ շնորհըը
պէտք է , զոր Աստուած չի խնայեր խնդրողներուն:
Ուստի թէ որ այսպէս բան մի և խոնարհութեան
զորիծ մի ընելու և ձեր անսխալ չըլլովը հրատա-

բակաւ խոստավխանելու րերամ մի և յոյտրութիւն
մի չունենար նէ՝ առ Աստուած աղօթեցէք որ թէ
ձեր և թէ ձեղի նման ուրիշներուն հսդւց վըր-
կութեանը համար այս առարինութիւնը կատարե-
լու արիստիւնը ձեղի շնորհէ : Այս աղօթքնիդ
ացնքան հաճեցի կը ըլլոց Աստուածոյ՝ որքան անհաճոյ
է միւս աղօթքները , զոր Ս. Գիրք կարդալու գու-
մարուած ժամանուինիդ՝ անար հաստատած Ս. Եկե-
ղեցին աղօրբակը և յորդը որոկեցնելու համար
նոյն խել անար սուրբ խօսքերէն զէնք գտնելու
ձեզի օգնուիսն կը խնդրէք Ս. Հողին , որ արդէն
եկած է և կ'առաջնարդէ Ս. Եկեղեցւոյ՝ որ մէկ
հաւատի վրայ մնայ , և ոչ թէ ասանձին մորդոց
որ այն եկեղեցին զատարին և մարդովուս մէկ մէկ
տեսակ հաւատ ունենան : Այսպիսի դիմութեամբ
խնդրուածի մը աւելի արժան է հայհոյտթիւն ա-
նուն տառէ քան թէ աղօթք անուանել , և ոյս ը-
ասձիս ճշմարտուի եանը համազւելու համար բառա-
կան է մարերի իդ ծուռ նախապաշարումէ մուգրել
և քառձիս վրայ իմաստուն մատղրտթեամբ խար-
կիւ : Տիրն մեր վրելութիւնը հաւատացողներուն
խոստացու և որ հաւատաց և միրաեցի՝ կեցցէ պ-
քառ . (Թորկ ծԶ. 16) : Մարդ մէկ բանին ճշ-
մարիս ըլլուան կատարելուովէս համազւած ըլլոց
նէ անար վրայ բննութիւն ընելու հարկ մը շնոնշ-
նար , քննելու շնորակալու և երկմտելու նշան ըլ-
լազուն համար հաւատաց հետ մէկով շըլլոր , հա-
ւատալն Աստուածոյ հաճոց ըլլալուն համար՝ երկմո-

տեղն ու քննութեան տակ ձգելը անհամոյ կ'ըլլոյ ,
և Ս. Պօղոս առաքեալը՝ մարգարէին բերնով Աս-
տուծոյ ըսածը մէջ կը բերէ , թէ « արդարն իմ 'ի
հաւատոց կեցցէ , և եթէ յերկիմսոս ոք իցէ՝ ոչ
հաճեսցի ընդ նա անձն իմ' : Եւ ինքը ուրախու-
թիւն մը կը ցըցունէ երկմտութեամբ վտանգի մէջ
շգտնուելուն համար , և կ'ըսէ , « բայց մեք ո՛չ ե-
թէ երկմտութեամբ եմք 'ի կորուստ , այլ հաւա-
տովք՝ 'ի փրկութիւն հողոյ » , (երր , լք , 38 ,
39) : Կը հասկնար այս խօսքերէն՝ որ հաւատը և
սուրբ գիրքը քննելու համար զՀողին սուրբ կոչելը
և ազօթելը՝ իր կորաւեանը համար ազօթել է : Ա-
սով կը հասկեար որ զՀողին սուրբ խնդրելնիդ որ
գայ և ճշմարտութիւնը ձեզի յայտնէ՝ Աստուծոյ
բնդունելի աղօթքներէն չէ : Այսպիսի քննութիւն-
ներէն կ'զգուշացնէ մեզ Ս. Լուսաւորիչ հայրա-
պետն ըսելով , « Դադարենցուք՝ 'ի դատարկ և 'ի
վայրապար քննութենէ , և զհետ երթիցուք զմը-
րատոց զրոց սրբոց հնոցն և նորոց (Յաճախազա-
տում , յառ , Բ . երես 8 . ջոյ կոստանդ , 1824) :

Գիտեմ՝ որ այս ըսածներուս դէմ ըսելիք ու-
նին բողոքականները , այն ալ սուրբ զրոց վիսյու-
թեամբ , որ թէ որ անոնց հասկցածին պէս ըլլոյ
նէ՝ խիստ քիչ մարդ կը մեայ հաւատացելոց կար-
գը , վասն զի բերելու վիսյութիւննին անանկ բա-
ներ են որ ամէն մարդ սուրբ զրոց խօսքը քննե-
լու և անկէց ետքը հաւատալու կը սրարուաւորեն ,
որուն ամէն մարդ կարողութիւն չունենալը դուք

ալ կը վկայէք թէ որ ձեր մտաց զօրսւթիւնը և հասողութիւնը անկեղծութեամբ քննէք . Այս վրայութիւններս ասոնք են : Դաւիթ մարգարէն հաւատացելոց բերնէն կ'ըսէ , « Խմաստուն արա զիստէր և քննեցից զօրէնս քո , և պահեցից զնա բոլով սրտիւ խմով » , (Սալմ . ձժԸ , 34) : Եւ Տէրն մեր , կըսէ փարիսեցիններուն՝ որ զինքը չէին հաւատար թէ Մեսիայն է « Քննեցէք զգիրս , զի դուք համարիք նոքօք ունել զկեանն յաւխտենականս » (Յով . Ե . 39) : Առար Պուկաս աւետարանիչն ալ Բերիացի հրեանները կը գովիէ և կ'ըսէ թէ զիրքը (Աստուածաշոնչը) կը քննէին , « նոքա էին սովորագոյնք՝ քան որ 'ի Թեսաղոնիկն էին , սրք ընկալան զրանն ամենայն յօժարութեամբ , հանապազ քննէին զգիրս՝ եթէ իցէ սյս այսպէս » : (Գործք . Ֆէ . 11) : Աւրիշներ ալ կը զտնուին , բացց ասոնց համար տալու սրատասխանս անոնց ամէնուն ալ բաւական է :

Սալմոնին ըսած քննութիւնը՝ ընդունելու իրամ մերժելու համար ըլլալիք քննութիւն մը չէ , Աստուածային սրատուիրանքը որքան որ յիշեր է նէ գործադրեր է , բացց կասկած ընելով , գուցէ ամէն սրատուերները չկրցաւ հասկնալ , կուղէ խմաստուն ըլլալ որ քննէ և հասկնայ թէ ուրիշ սրատուերներ ալ կա՞ն տրդեօք՝ սրոց գործադրութիւնը ակամոյ անզիտութեամբ զանց ըրած ըլլայ , և շատ փախաքելի է որ ամէն մարդ այսպիսի քըննութիւն ընէ :

Տեսան մերոյ առ հրէոցա ըստածը ասոր ալէս
քննութիւն չէ , ճիշդ բողոքականներուն հասկցած
և գործադրել ուղած և ամէն իրենց հետեւողնե-
րուն սպասուիրած քննութիւնն է . բայց սա տար-
րերութիւնները կան մէջերնին : Հրէոյները որոնց
հետ կը խօսի՛ Տէրն մեր , անոր Մեսիայ ըլլալուն
չէին հաւատար . բողոքականներն այնպիսի անձանց
կուտան այս պատուէրը , որոնք արդէն հաւատա-
ցած են , որպէս թէ անոնց ըսել ուղած ըլլան ,
դուք անանկ բանի մը հաւատացեր էք որ՝ սուս
ալ կրնոյ ըլլալ , ովէտք է որ քննէք , և սուտ չըե-
լալը աղէկ մը հասկնաղէն ետքը հաւատաք : Այս-
պիսի քննութիւն ընել՝ արդէն չհաւատացաղներուն
կ'ըլլաց՝ ինչովէս էին Քերիացի հրեայները , որոնք
աստբելական քարոզութիւնը լսած առեննին , ո-
րսիշետե ասոնք կը քարոզէին որ սուրբ զրոց մէջ
Մեսիայի համար ի՞նչ մարդարէութիւն կան նէ՝ ա-
մէնն ալ Յիսոս Նաղովիեցիին վրայ կատարուե-
ցան , կը քննէին թէ ճշմարիտ է արդեօք ըսած-
նին . և այս քննութիւնս անոնք հաւատրի կը բե-
րէր , լսածնին առըրբ զրաց խօսրին հետ կը բաղ-
դատէին , վասն զի այս է քննութիւնը , լսածը՝ ի-
րեն իրրեւ անհակառակելի ճշմարտութիւն սեսրած
բանի մը հետ բաղդատել :

Բայց մէկ բանին անհակառակելի ճշմարտու-
թիւն ըլլալը՝ այն բանը անանկ սեսրելով և այնպիս
է ըսելով չըլլար , այն ալ քննել ովէտք է թէ այն
բանին ճշմարտութիւնը ի՞նչ բանի վրայ հիմնուած-

է : Մենք ուղղուիսառք՝ սուրբ գրոց ամէն խօսքեւրը Աստուածոյին ներշնչութեամբ գրուած ըլլաւ լուն հաւատալով՝ հաւատոց և բարոց վերսրերեալ բաներն անոր խօսքերուն հետ կը բաղդատեմք և անոր համեմատ գտնուածը կընդունիմք և ճըշմարիտ ըլլալուն վրաց ամենեին տարակոյս չեմք ունենար, և այս կողմէն բողոքականաց համաձայն եմք . կամ գոնէ բողոքականք ալ՝ մենք ասանկ կ'ընեմք ըսելով՝ ուղղափառաց բանած ճամբուն իշխաւունք կուտան : Երկու կէտ կայ՝ որոց վրացօք իրարմէ կը տարբերիմք, մէկը՝ որ անոնք մեր հաս կըցածին պէս չը հասկնալով վէճ կը յարուցանեն, որպէս թէ իրենց հասկցածը հարկու ճշմարիտ միտքը եղած ըլլաց, և ամէն մարդ օրաբատական ըլլաց այնպէս հաւատալու . վէճը գաղթեցնելու համար երրորդ մը գտնել պէտք է, Մենք երբ այս երրորդը գտ գտնելը անոնց կը յանձնեմք : Ոմանք կ'ըսեն թէ սուրբ գրոց մէջ տեղ մը խրթին գրուած ըլլաւ լով ծուռ հասկնալու տեղի տոււած խօսքը նոյն սուրբ գրոց մէջ ուրիշ տեղ մ'ալ կը գանուի, և ասիկոյ առաջնոյն միաբը կը բանաց, Բայց մարդ չ'ըսեր թէ իմ գիտցածս կամ հասկցածս ծուռ է, այլ անոր բանածը ուրիշ կերպ մեկնող խօսք մը մէջ բերես նէ՛ անիկաց քու բերածդ խրթին կը դտնէ, և իր գտած և ծուռ հասկցածը քու մէջ բերած խօսքիդ իրեւ մեկնիչ կը բռնէ : Ասիկոյ աղէկ մը հասկնալու համար օրինակի կը կարօտիմք :

Տեառն մերոյ համբաւանպէն և Հոգւոյն սրբոյ

դալստեամբը քրիստոնէական եկեղեցին կազմակերպելէն և հաստատելէն 300 տարիի մօտ ժամանակ ետքը արխոսականներն եղան որ Քրիստոսի Տեառն մերոյ աստուածութիւնը կուրանացին : Ասոնք մարելէն 1200 տարի ետքը՝ Կուտերի Գերմանիա և Կալվինի Հարաւային Գաղղիա և Յունիկ Զուիցերի այլ ուրիշ տեղեր այլ և այլ տեսակ բաներ քարոզած ատենը Ասկինոս անուն մէկն ալ Արխոսի աղանդը նորոգեց, և ինքն ալ բողոքական էր, և հետեւողներն ալ՝ որ Խիստ շատցած են, բողոքականներուն մէկ մասնաւոր ընկերութեան մը պիս բռնուած են, ասոնք ալ սուրբ գիրք կը կարդան, և ամէն հետեւողներուն ալ կը պատուիրեն որ կարդան և քննեն, ճշմարիտ գտածնին ընդունին և սուս և անհիմն զըտածնին մերժեն : Ասկինեանը՝ որ Տեառն մերոյ ճշմարտապիս Հօր Աստուծոյ Համազոյ Աստուած ըլլութ չընդունիր, սուրբ գրոց մէջ գրուած գտեր է նոյն խակ անոր « Հայր իմ մեծ է քան զիս » ըսելը, (Յով . ԺԴ . 28) : Գիմացինը զոր նոյնապիս բողոքական կենթաղբեմք, բացց « չ սոկինեան, ասոր հասկցածը ծուռ կը դատէ : Սոկինեանը կ'ըսէ, ամենասրարդ խօսք մ'է ասիկայ, որուն մէջ ծըսութիւն մտնելու տեղ չկայ : Հաւկառակորդը կ'ըսէ, բացց ասոր հակառակ՝ նոյն սուրբ գրոց մէջ կայ որ Հայր և Արդի մի Աստուած են, ինչպիս որ Տէրն մեր ինքը հրէից բազմութեան առջեւ ըստծ է . « Ես և Հայր իմ մի եմք » , (Յով .

ֆ. 29) և այս միութեան մէջ իբարձէ մեծ ու սլըդաբիկ չըլլար : Թէ որ Սոկինեանն ըսէ որ քու բերած վկայութեանդ միտրը քիչ մը անորոշ կ'երևի , և յը հասկցընէր թէ ի՞նչ բանով մէկ են , վասն զի մէկը ուրիշի մը մտրին համաձայն խորհի , կամ մէկ ընկեր մ'ունենաց զործոյ և շահու՝ անոր համար ալ կրնայ ըսել թէ ես ու անիկայ մէկ եմք : Ուստի այդ վկայութեանդ բուն միտրը իմ բերած վկայութիւնովս կը մեկնուի : Հակառակորդը չը հաւանիր և կը պնդէ թէ այդպէս չէ . իմ ըստծո սրարդէ , և անոր համեմատ քու վկայութիւնդ մեկնելու է : Վէճն այսպէս կը քշէ , երկու կողմնալ իրենց զիտցածէն չեն շեղիր , և իրենց քննութենէն բան չեն շահիր :

Սոկինեանին հակառակորդը կրնայ ըլլար որ սուրբ գիրքը աւելի մտադրութեամբ կարդացած՝ և Պօղոս առաքելցն առ Հռոմայեցիս զրած թողթոյն մէջ՝ զոր ինքը Աստուածաշունչի մէջ սրարունակեալ ամին զրոց ոլէս Աստուածային ներշնչութեամբ դրուած կը հաւատայ , սա խօսքը գտնոյ , ուր սուրբ առաքեալը հրէից աղղին ուրիշ ազգերէն աւելի ունեցած իրենց յստուել առաքելութիւններուն կարդը կը զնէ Քրիստոսի ալ նոյն աղղէն ըլլալը , բայց կ'ըսէ որ այն աղղէն էր միայն մարմնայ կողմէն . ապա թէ ոչ՝ ինքն Աստուած էր ամին բանէն վեր : « Որոց հարբն , յորոց և Քրիստոս ըստ մարմնայ . որ է ՚ի վերաց ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս » (Հռոմ. Թ. 5):

Գիտի կարծեր թէ Սոկրինեանն ասոր ըսելիք մը
չունենար , և իւր կարծիքը ծուռ ըլլալուն համոզ-
ուելով կը վոխէ , և հակառակորդին համոզուելով
վէճը կը լնոյնէ : Ասանի ընելն իրեն պղտիկոթիւն
սեալելով ուրիշ կերալի կը դարձնէ խօսք . և երկու
կերալ ըսելիք ունի , մէկը այս՝ թէ ինչէ՞ն գիտնամ
որ այդ խօսքը Քրիստոսի Աստուածութիւնը հաւա-
տացող մէկը իրմէ շինած և Պօլոս առաքելոյն խօս-
քերուն կարգը խօթած չըլլոյ , որով քու բերած
վկայութիւնդ կ'ըլլոյ անծանօթ մէկու մը խօսք .
ուստի և անհարազատ և անընդունելի : Եւ թէ որ
հակառակորդը ասոր հարազատութիւնը անդէ և
ամէն օրինակիներու և թարգմանութիւններու և հին
ժամանակէն ՚ի վեր բազմ'աթիւ մատենազրաց այս
խօսքը յիշելուն վկայութեամի՞ը հաստատէ սուրբ
առաքելոյն իր խօսքն ըլլոյը՝ որն որ ուրանակը ան-
հընար է , երկրորդ կերալին ձեռք կը զարնէ , Քր-
իստոսի Հօր Աստուածոյ հաւատար Աստուած ըլլոյը
իմ խելքիս դէմ կուգայ կ'ըսէ , և Աստուած որ
ինձի այն խելքը տուեր է՝ զիս չը պարտաւորեր
խելքիս չը հասած բանին հաւատալու : Թո՛ղ հա-
կառակորդն ըսէ անոր թէ Աստուածային յայտ-
նութեան մէկ մասն է այս , ինքն Աստուած իր
ընտրած մարդոցը ներշնչած է որ ասոնք գլուն , և
մենք պարտական եմք հաւատալու ինչ որ Աստ-
ուած մեզի յայտնելու հաճեր է : Թէ որ Սոկրինեա-
նը Աստուածային ներշնչմամբ գրուած զրբեր կե-
նալուն կը հաւատայ նէ . ինչովէս որ մեր այս կող

մերս ճանչցուած բողոքականները կը հաւատուն ,
ի՛ստիալուի սցդ զրբերը երկու կարդ բաժնելու ,
իրեն ընդունած ճշմարտութիւնները սրարունակով
զրբերը կանոնական անուաննելով իրրեւ կանոն հա-
ւատոյ կը բռնէ , միւսները անկանոն անուաննելով
միացն իրրեւ բարեկալաւտական գիրք կը կարդայ ա-
ռանց ընդուննելու՝ թէ անսոնց մէջ սրարունակուած
բաններն ալ որ իւր գաղափարին և խելքին հակա-
ռակ կուգան , իրրեւ բան Աստուծոյ բռննելով հա-
ւատոյ : Ասանկ ըրած են բողոքականները , և ա-
ռոր համար՝ տպած և ամէն տեղ ցրուած աստ-
ուածաշունչնին՝ զոր ամէն մարդոց հասկանալի ընե-
լու համար այլ և ոյլ լեզուններու ալ թարգմանած
և տպած են , սրակաս և կրծատեալ է , անանկ
զրբեր՝ որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիք կ'ընդու-
նին , կամ ամէնը մէկէն , կամ՝ մէջէն մէկ երկու
տուն կամ բանի մը զլուխ բան դուրս ձգած են ,
և որովհետեւ եկեղեցւոյ անսխալութիւնը՝ զոր հայ-
րասիւնները և եկեղեցւոյ վարդապետները զրի
առննելով մեղի աւանդած են՝ չեն ընդունիր , ոչ ըն-
դունած զրբերնուն աստուածաշունչ և կանոնական
ըլլալը՝ և ոչ ընդունածնուն լոկ մարդու հեղինա-
կութիւն և անկանոն ըլլալը չեն կրնար հաստա-
տել , և իրենց կրօնական կարծիքը հաստատելու
համար սուբբ զրբէն վկայութիւն բերելու իրաւուն-
քը կորուսած են , վասն զի իրենց հակառակորդը
իրենց հասկցածին հակառակ մտքովը հասկնոյ նէ՝
իրենց կարծեացը ճշմարտութիւնը հաստատելու

Համար՝ իրենց լսելքին այնպէս յարմար երևելէն
զատ մէջ բերելու փաստ չոնին : Եւ որովհետև
ամէն մարդ խելք ունի, մի և նոյն փաստը իր հա-
կառակորդն ալ կը բանէ, որով երկու հակառակ
կողման վկայն համազօր ըլլոլով փաստերնին ալ
անզօր կ'ըլլոյ :

Չեզ այսպէս չեմ տեսներ սիրելիք . թէպէտ
անոնց նմանած էք, սակայն նմանութիւննիդ ճիշդ
և կատարեալ չէ . սուրբ զրոց հեղինակութեան
չետ եկեղեցին ալ կ'ընդունիք : Բողոքականութեան
օտարազգի քարոզիչներուն՝ որ ձեր և հոյազգի
բոլոր բողոքականաց առաջին վարժապետներն են,
չէք նմանիք եկեղեցին ընդունելովնիդ, բայց առով
հաւատոքնիդ ուղիղ և կատարեալ չըլլոր : Հաւա-
տոյ հանդանակին մէջ՝ զոր ձեզի վարժապետու-
թիւն ընտղ բողոքականները ընդունիլ կը խոստա-
նան, « Հաւատամբ ՚ի մի միայն սուրբ կաթողիկէ
և առարելական եկեղեցի » խօսքը ճշմարտապէս
չեն ընդունիք : Առա թէ ո՛չ ի՞նչ մտքով կառնեն
այս խօսքը : Եկեղեցի մը կայ ըլլալը թէ որ սիստի
ընդունին՝ հրէից սինակովիկայն ալ կ'ընդունին . ա-
մէն տեսակ հերետիկոսաց և անհաւատից և կռա-
պաշտից ժողովներն ալ կ'ընդունին, որովհետեւ ա-
սնք ամէնն ալ կան, սակայն ասոնք ընդունիլը
հաւատոյ յօդուածի կարգ նշանակուած չէ : Թէ ու
ընդունած և դոյութիւնը հաւատացած եկեղեցի-
նին Քրիստոսի Տեսան մերոյ հիման և Հոգւով որդ-
րով ամենայն ճշմարտութեամբ առաջնորդուած ե-

կեղեցին է զոր առաքեալները և անոնց յաջորդ առաքելաշնորհ հոյրապետները և վարդապետները բոլոր աշխարհ տարածեցին, այն եկեղեցին՝ որուն գժոխոց դռներէն անդամ՝ անյաղթելի մեալով մինչև աշխատրհիս վերջը կենալիքը Տեառն մերոյ անսաւտ խօսքովն երաշխառուած է, անոր բոլոր վիտյութիւնը և աւանդուած բոլոր ուսմունքն ընդունուին է անոր հաւատալը, թէ սուրբ զրոց մէջ գրուած ըլլան, և թէ չըլլան. վասն զի պատմաբնօրէն ստուգուած է որ առաջին հաւատացեալ քրիստոնեայները սուրբ զիրք չունէի, նոր կոտակարանի առաջին զիրքը, այսինքն Սատթէսի աւետարանը Քրիստոսի համբարձմանէն ութը տարի ետքը գրուեցաւ, իսկ հոգեգալատեան օրը միտյն Քրիստոսի հաւատալով մկրտեալները ութը հաղար հոգիի հասան (Գործք. Բ. 46—4)։ Եւ անանկ բաներ ալ կան որ մեծ կարեորութիւն ունին, ուստի ոլէտը է որ սուրբ զրոց մէջ արձանադրուած ըլլային, բայց գրուած չկան։ Տէրն մեր իւր շարչարանաց նախընթաց զիւերը առաքեալներուն խոստացաւ որ Հօր Աստուծոյ վրոյ հետերնին յայտնի խօսի. «Եկեսոցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցաց ընդ ձեզ. այլ յայտնասլէս զհօրէ պատուեցից ձեզ» (Յովէ. ԺԶ. 25)։ և յարութիւն առնելին ետքը աշխատրհիս վրայ քառասուն օր մեալով յաճախ կը աեսնուէր առաքելոց հետ, և Աստուծոյ արքայութեանը վրայ կը խօսէր. որ է նորահասաւատ եկեղեցեաց վրայ, յայտ-

նի է որ անոր կառավարելու եղանակը կը սորվեց ցըներ , խորհուրդները և անոնք մտակարարելու կերպը կ'աւանդէր , (Գործք . Ա . 3) ևն : Ասոնց համար մարդ չկընար ըսել թէ կարեւորութիւն շունէին , Տէրն մեր՝ որ գատարիկ խօսք խօսիլն արդիլած է , (Մատ . ԺԲ . 36) : Խնդը առարելոց հետ այնքան ժամանակ դատարիկ խօսքով չէր անցընէր : Սուրբ Պօղոս առարելոյն բերանացի և առանց զըրի առնելու իր աշակերտացը սորմիցուցած բանն ալ՝ որուն համար իւր աշակերտ Տիմոթէոսին կը զրէ թէ հաւատարիմ մարդոց աւանդէ որ ուրիշներուն ալ սորմիցնելու կարող ըլլան առանց իւրենցիմէ բան խառնելու կամ մէջէն բան պակսեցընելու , վասն զի հաւատարիմ մարդ ընտրել պատուիրելը ասոր համոր է (Բ . Տիմ . Բ . 2) , ոչ ինքը կը զրէ ասոնց ինչ ըլլալը , և ոչ Տիմոթէոսի կը պատուիրէ որ զրէ : Հարկաւ կը հասկընաք առոնցմէ՝ որ միայն սուրբ զրոց մէջ զրուածը կարդալու ասպամինելով եկեղեցական աւանդութիւնը շընողունողները ծանր սխալանաց մէջ կիշնան , ոչ միայն անոնց մէջ չը զրուածները առելորդ և անողիտ ուեսկելով՝ ոյլ և զրուածներուն ալ մտացածին ծուռ մեկնութիւններ տալով , որոց ճշմարիտ իմաստոր և մեկնութիւնը եկեղեցւոյ աւանդութեանց մէջ կը գտնուի :

Ասոնք այսորէս ըլլալով՝ երկու բան նշմարել ալէտք է աւանդութիւն ըսուածներուն վրայ , վասն զի այն ալ պիտիալուէ որ ամէն մէկ մասնաւոր եկեղե-

յիններուն կրօնական արարողաթիւնները Աստուածայինն և առաքելական աւանդութեանց կարգը չեն մտներ , այլ խրաբանչիւր ազգի հայրապետ՝ խր ազգին բարուցը և մասնաւոր սրարադայից համեմատ բաներ աւանդած են՝ որուն քրիստոսական եկեղեցին արտօնութիւն ունի . և այսպէս արտօնութեան առաջին օրինակը նոյն խել առաքեալներին տեսանք , որ մովսիաական օրինաց խօսքութիւն օրէնքները ետ ձգելու համար ժողով ըրին Երուսաղէմ և վճիռ տուին . թէսկտ այս բանիս վրայ չը յիշուիր թէ Տէրն մեր անոնց յատուկ հրահանգ տուած ըլլայ (Գործք . ԺԵ . 5-30) : Ասանկ թէ ընդհանուր եկեղեցեաց և թէ մասնաւոր եկեղեցեաց աւանդութիւններուն համար նայելու է , չէ թէ սուրբ զրոց մէջ զրուած ըլլալը կամ չըլլալը , այլ զրուածին հակառակ ըլլալը . վասն զի մէկ տւանդութիւն մը որ սուրբ զրոց հակառակ չէ , և ամէն եկեղեցիք միաբան սրահած ևն անիկայ , և երբ սկսուած ըլլալը յայտնի չէ , անիկայ աստուածային և առաքելական է : Թէ որ մասնաւոր եկեղեցւոյ մը մէջ տեսնուի , և երբ սկսուելն ալ պատմութեանց մէջ նշանակուած ըլլայ , և սուրբ զրոց՝ և ուրիշ եկեղեցեաց միաբան ընդունած աւանդութեանը՝ զոր այն մասնաւոր եկեղեցին ալ այն նորը հաստատելին առաջ կ'ընդունէր , հակառակ չըլլայ , մերժելու բան մը չէ , հակառակ տեսնուի նէ կը մերժուի :

Ասոնք ասանկ ըլլալով՝ զորա անշուշտ սուրբ

գրոց խօսքերուն համաձայն կը տեսնէք, իրաւունքը
մը չեմ տեսներ պատասխանւոյն մէջ ձեր քերնէն
գրուածին վրայ, թէ տասներորդ դարէն առաջ ալ
լուսաւորչական եկեղեցւոյ մէջ զեղծումներ կան
եղեր, թէպէտ զրովը թեթևցուցեր է մեծ բաներ
չէին ըսելով, որ՝ թէ որ Հոգւալ սրբով առաջ
նորդեալ եկեղեցւոյ տրուած դրաւոր հրահանգին
հակառակ են նէ մեծ բան չին չկրնար ըսուիլ. և
պէտք էր որ ձեր քարոզիչները անոնք նշանակէին
և իրենց հետեւողներն անոնցմէ զգուշացնեին: Իսկ
թէ անոր հակառակ չեն նէ, այսինքն՝ թէ որ
սուրբ զրոց մէջ յայտնի գրուած չէ՝ թէ ոյն ինչ
բանը մի՛ ընէք կամ՝ այն ինչ բանին մի՛ հաւա-
տացք, և հիմ օրինաց մէջ աստուածային յայտ-
նութեամբ Առլիսէն և մարգարէներէն հաւատա-
ցեալ ազգին աւանդուած է. և նոր օրինաց մէջ
յայտնապէս արդիլուած չէ, և հայոց եկեղեցին
Լուսաւորչին ժամանակէն ՚ի վեր չէ թէ մինչեւ
տասներորդ դարը, այլ մինչեւ այս օրուան օրս կը
հաւատայ և ըստ այնմ՝ կը վարուի. այն բանը
միայն հացոց մէջ ալ տեսնուի նէ, միայն թէ աղ-
դային լիակատար ժողովով կամ ազգին եկեղե-
ցական զիխոյն հաճաթեամբն ընդունուած ըլլաց,
սուրբ զրոց մէջ անոր հակառակը չգտնուելուն
համար զեղծում չկրնար ըսուիլ: Ասիկայ անո-
րանալի է, վասն զի միկ բան մը որ Աստուած ին-
քըն յայտնութեամբ պատուիրած և կարգազրած
և հրահանգ տուած է, այն բանը միայն ինք կընայ

արգելուլ, և քանի որ ինքն այդպէս արգելը մը
դրած չէ, քրիստոնէական եկեղեցւոյ նկատմամբ
այս բանիս օլահորսնութեան յարաւեւութիւնը
զեղծում անուանելը յանդդնութիւն է ։ Մենք
չեմք զիտեր տակաւին թէ Լուսառոշին օրէն մին-
չև տասներորդ դար հայոց եկեղեցւոյն մէջ մուտ-
գտած բաները, որոնք զեղծում ըլլալով հանդերձ
մեծ բաներ չեն եղեր, ինչ են, ուստի չեմք ու-
զեր պատասխանաւուին այս խօսքը յանդգնու-
թիւն անուանել, միայն այն կազմէն յանդգնու-
թիւն է՝ որ եկեղեցւոյ դաստառը եղած է՝ մէկէ մը
այնպիսի իշխանութիւն առած շըլլալով։ և եկե-
ղեցւոյ մէջ ծըռութիւն գանելու ելեր է առանց
ուղղաշափ մը ունենալու, վասն դի՛ ինչոլէս որ
վերն ըսինք ։ Սուրբ գիրքը՝ զոր բողոքականաց հետ
ինքն ալ ուղղաչափ կը կարծէ, թէաէտ ըստ մեզ
Աստուծոյ խօսքը պարունակոծ ըլլալով անկէց ալ
շիտակ բան չլինար ըլլալ, բայց մէկ խօսքին վրայ
վէճ և խմասար բանալու տարածայնութիւն ըլլայ
նէ՝ սուրբ գիրքը ինքը չը խօսիր որ անոր հարցա-
նենք, բողոքականք կամ իրենց կամ ուրիշներուն
խելքին սլիտի հորցնեն. և ձեզի համար անոտարա-
կոյս գիտեմ որ սուրբ գիրքը՝ զոր ձեր հուսառքին
կանան կը ճանչնար, շատերնիդ բնաւ կարգացած
շէր, և քանի մի բաներ որ եկեղեցւոյ հաւատքին
և արարողութեանցը զէմ մէջ բերելու համար բե-
րան ըրած էք, չէ թէ անմիջապէս սուրբ գրքէն
ոչ ձեզնէ աւելի սուրբ գիրք կարդացող կարծը

ւած ուրիշ բողոքականէ մը սորված էք , և ասի .
կայ փորձուած է բազմաթիւ մերազգի բողոքակա-
նաց վրայ սա նշանով որ՝ Երբ սուրբ գրքին մէկ
խօսքը սխալ՝ և բողոքականներէն սորված մոքով
մէջ բերեն , և մէկն եղէ այն խօսքէն մէկ երկու
տաւն վերը կամ վարը գրուած խօսքովն այն սը-
խալը շտկելու ըլլաց , կը շուարին կը մնան . ինչ ը-
սելլիքնին չեն դիանար . կարելի է մոքերնէն սա
ալ անցնեն թէ բողոքականներուն հակառակորդ
մէկը իր հակառակորդները խայտառակելու համար
զրած և աւետարանի մէջ մոցաւցած ըլլաց . որով
հետեւ այն ալ չը դիտեն թէ իրենց վարպետնե-
րուն տալած և ամենուն դիւրիմաց ընելու համար
այլ և այլ լեզու թարգմանելով հաստատակած Աստ-
ուածաշունչին մէջ ալ կայ այն խօսքը : Ահա այս
սլահի անձանց եկեղեցւոյ գատաւոր ըլլալը յանդը-
նոթիւն է , և ասանկ պատճառուներով եկեղեցին
զատուիլ՝ դոր Տէրն մեր իւր աշխարհակեցոց ար-
իսնը թափելով հաստատեց և մշտնջենաւորութիւ-
նը և անխուալ մնալիքը իր երաշխառարութեան տակ
առաւ՝ մինչեւ աշխարհիս վերջը հաւատացելոց մի-
ութեան կամ եկեղեցւոյն հետ մնալ խաստանալով ,
և երթալ ուրիշ ընկերութեան անդամ ըլլալ որ
անոր հաստատածը չէ , և անոր թելողբութեամբը
սրախարակել և իրրեւ սխալեալ գրողարտել եկե-
ղեցին , և անկէց դատուիլը իրեն սրարծանք բռնել-
ասիկայ՝ սիրելիք , պարզ յանդգնութիւն չէ :
հայհոյութիւն և սոսկալի ամբարշտութիւն չ :

Պիտի՞ք որ Տէրն մեր՝ իրեն դէմ եղած մեղաքերը և հայհոյոթիւնները թողոթեան արժանի տեսաւ, որովհետև ինքը թէսլէտ ձշմարիտ Աստուած էր, բայց մարդկացին մարմին առած ըլլալով՝ աստուածոթեան փասքը անտեսանելի էր: Ասկայն Հոգին սուրբ Աստուած էր. և աստուածակայելուչ փառքը և զործերը մարդոցմէ ծածկած շէր: Տեսան մերոյ գործած հրաշքներն աստուածային էին, մարդ այնպէս բան չէր կրնար ընել: Հրեայները թէ որ ասոնց աստուածային ըլլալը խոստովանէին նէ՝ դՏէրն մեր Աեսիայ և որդի Աստուածոյ ընդունելու էին, և սամկայ ռարրիներուն և փարիսեցիններուն գործին չէր դար. ուստի ժողովուրդը 'ի Քրիստոս հաւատալէն ետ կեցնելու համար դանոնք խօսելու և մովրութեան մէջ սրանելու դիտաւորութեամբ կըսէին թէ սատանայի ուժովնէ որ Յիսուս Նազուլուեցին այս հրաշքս կընէ: Քրիստոս անոնց ըսածը ջրեց բնական փաստերով. թէ մէկ սատանայ մը մէկուն փորք մըտած ուրիշ սատանան չի կրնար հանել. և յայտնեց որ ինքը Հոգւալ որբազ այսինքն՝ աստուածային զօրութեամբը կը հանէ դները. և այս զօրութիւնը Հոգւայն սրբոյ ալ է (Մատ. Ժ. 28) զորմիւս աւետարանիչ մը՝ մատամբ Աստուածոյ կըսէ: (Ղու. Ժ. 20) Այս առթովէ որ Տէրն մեր՝ իրէն դէմ հայհոյողներուն և զէշ խօսողներուն մեղացը թողութիւն խօստանալուն հետ՝ Հոգին սուրբ հայհոյողներուն մեղքը այս աշխարհիս մէջ

ԹԵՂ ՀԱՅՈՂԵՐՁԵՆԱԼ աշխարհն աԼ տնբառելի է ըստ :
(Մատ . ԺԲ . 31 . 32) Արդարեւ Քրիստոսի Տեսան
մերոյ անառատ բերնին ելուծ սարառմիելի ոպանա-
վիք . որուն պարագ ելլելը՝ երկինքին և աշխարհին
անցնիլ և ոչնչանալին դժուար ըլլազը՝ «Երկինք և
երկիր անցցեն և բանք իմ՝ ոչ անցցեն» ըսելին
զիտեմք (Ղուկ . ԽԱ . 32) : Արդ՝ եկեղեցին սխա-
լեցաւ ըսելիոդ և անիկայ շխտկելու ելլողներուն
հաւատալ և գործակից ըլլանիոդ ի՞նչպէս կերեսի
ձեզի : Եկեղեցւոյ առաջնորդելու համար Հոգւոյն
սրբոյ գալստեան երաշխառութիւն մը շիոյ ըսե-
լը՝ սուտ հանել է աւետարանը դոր հաւատոյ միսակ
կանոն բռնած էք : Ասով ձեր հաւատորին կանոնը՝
որ ձեսքերնիդ կենալով ուլ ձեզի օգուտ չունի ,
ձեսքէ կը հանէք : Խոստացաւ և չը զրկեց ըսելը՝
Տէրն մեր իր խօսքին վրայ չը կեցաւ ըսել է , որ
սյս խաստմանը կոտսարաւմը իրրեւ Աստուած սիստի
ըներ և ոչ իրրեւ մարդ , ուստի սյս ըսելն ալ
ընդդէմ Հոգւոյն որբոյ հոյշութեան կորդն է և
անբաւելի . Հոգին սուրբ շեկաւ ըսելը՝ սուրբ Եր-
բորդութեան անձանց մէջ՝ որ էութեամբ և գայու-
թեամբ և կամօք և դործով մէկ են , կամաց տար-
բերութիւն ենթադրել է , որով դայութեանց ալ
տարբերութիւն կ'ըլլայ . և մէկ Աստուածոյ տեղ ե-
րեք Աստուած խոստովանել և բազմասուածու-
թեան մէջ իյնալ պէտք կ'ըլլայ : Ամենայն ճշմար-
տութեամբ չի կրցաւ առաջնորդել չեն կընալ ը-
սել , ասիկայ ամէն մորդ զիտէ սր Հոգւոյն որբոյ

դէմ հոյհոյելէն արիչ բան չէ : Կը մաս մէկ խօռք
մը ձեր քարտղիշներուն ըսելիք , զոր ըսած և զւ-
բած ալ են . և է այս : « Հողին սուրբ եկեղեցւոյն
ամենայն ճշմարտութեամի՞ կ'առաջնորդէ » կ'ըսեն .
և մենք այն եկեղեցւոյն կը հաւասարեք . բայց այն
եկեղեցին անտեսանելլէ , և մարդ չը կրնար դիա-
նալ թէ ո՞ւր է և անդամները ո՞վ են : Ճաել է որ
այդ եկեղեցին ինչ սորմեցնելն ալ՝ որ Հոգւոյն
սրբոյ սորմեցուցածը պիտի ըլլաց՝ չը զիսացախ .
ամէն մարդ կրնաց ըսել թէ ևս այն անտեսանելլ
եկեղեցւոյ անդամներէն եմ , և ըստօ Հոգւոյն
սրբոյ վարդապետութիւնն է : Բայց եկեղեցին տե-
սանելի պիտի ըլլաց . և զոնէ տառափելոց ժամանա-
կը տեսանելի ըլլալոն՝ շիաց բարպատիսն ուսուցիչ
մը որ հակառակ կենաց : Այլ կ'ըսէն թէ եռքի
ժամանակները այլ և ոյլ հալսծանրներու երեսէն
ճշմարիտ եկեղեցւոյ անդամները հարիկ սեպեցին
իրենց ուղիղ հաւասայ զտաւանութիւնը ծածկել .
և այսողէս ճշմարիտ եկեղեցին ծածկեալ մնաց :
Ասիկոյ Տեսան մերոյ ըստածը թէ եկեղեցին զը-
ժախտի դաներէն պիտի չը յազմտի՞ սուս կը հո-
նէ . և այն մարզիկը՝ որք Տեսան մերոյ սլատուե-
րը մտիկ չեն ըբած « Զոր ասեմ ձեզ 'ի խաւորի
« ասացէք 'ի լցո . և զոր լոէք յունկանէ՝ քարո-
« զեցէք 'ի վերաց տանեաց » (Մատ . Փ . 27) , և
դիրենք մարմնաւորապէս մեռյնողներէն վասու-
թեամի վախցեր են . այնպիսիները եկեղեցւոյն մը-
ալն ջենաւորաւթեան միջնորդ ընելնին , և ասոնց

Համար եկեղեցին անտեսանելի ընելնին զարմանապահէ, ասոնց ըստ եկեղեցին՝ թշնամեաց առջևէն վախչող և ցրուող բանակի մը ճիշդ նմանութիւնը կը կըէ. որ յիբասի վախչելովը անցաղին ելլութիւնը նախամինք և խայտառակոթիւն է և ոչ վասք :

Հիմաց կը հարցնեմ ձեզի, ձեզ բուռսրականութեան մէջ ձգող վարպետնիդ ի՞նչ կերպով պիտի ցըցունէ թէ ընդդէմ Հոգւոյն սրբոյ հայհոյութիւն չէ ըրածնիլ, և ի՞նչպէս համարձակեր են Տեառն մերոյ հոգեկեցոյց խօսքերուն մէկ մոռը՝ որ հոգւոյ փրկութեան ճանապարհը կը ցըցունեն՝ ձեզնէ ուահել, և աւետարանի սուրբ անունը շարաշար զործածելով որ ամբարշատութիւն մըն ալ ոյտ է, ձեզ իրենց համակարծիք ընել և աւետարանը ուրանարու սուաջնորդել, ինչպէս որ եւրոպացի բողոքականներուն խմաստուններուն համար զիտեմ որ իրենց զրութեանը պինդ կապուած ըլլալով. և հատկութիւններէն վախչելու և զրութիւնն ալ ձգելու շափ արիութիւն չունենալով՝ հաւատքը բուլու ոչնչացոցած են. և ինչպէս որ ժամանակ մը առաջ մէկ զրբի մը մէջ կարդացեր եմ. եւրոպացի բողոքականներուն հիմակուան հուատոյ դաւանութիւնը ձեռքին մեծ մատին եղունգին վրայ կընայ զրբալ: Թէ որ ձեր բողոքականութեան քարոզիչները ասոնցմէ են նէ՝ աւետարանին և սուրբ զրբի անունը բերան թող չառնեն. քրիստոնէաթիւն կը սորմեցնեմք ըսելէ թող դադարին, և ձեր ալ

տառնց յարելէն առաջ ձեր նախնիքներէն ունեցած
հաւատքնիդ և ամէն կերպով եկեղեցւոյ հաւատքին
համաձայն գտնուելնիդ , և մաքուր խղճիւ և առանց
սոսոթեան «Հաւատտամբ 'ի մի միայն սուրբ կաթու-
ղիմիկ և առաքելական եկեղեցի» ըսելու կարտզ ըւ-
լալնուդ հետ Աստուածային սրատաէրն ալ կատա-
րելու փոյթ տանելնիդ ձեզի անշուշտ կը հասցնէ
յաղթական եկեղեցւոյն հետ միանալու . որ է հո-
ւատով և յուսով և աստուածային և եղբայրական
սիրով 'ի տէր հանգուցեալ սրբոց միութիւնը : Եւ
թէ որ քարոզիչներնիդ եւրոպացի և ամերիկացի
վերոյիշեալ քարոզիչներուն համախոհ չ'են նէ՝ յոր-
գորեցէք զանոնք որ երթան իրենց աղքակիցները
հաւատոյ և աւետարանի լուսով լուսաւորեն : Այս
որ չեն ըներ նէ՝ սրատճառը գուրք ձեզին գուշակե-
լու էք . Ասոնք եւրոպացի բողոքականներուն չափ
իմաստուն ըլլալու չ'են . և անոնց մէջ բերած ա-
ռարկութիւններուն սրատամիան տօսլու կարաղու-
թիւն ունենալու չ'են , անոր համար այս կողմերս
եկեր են և իրենց չափ իմաստութիւն չունեցող
մարդիկ գտեր են որ իրենց աղքայիններուն ընդու-
նել տալ շի կրցած բաներնին անոնց ընդունել
տան : Եւ թէ որ ապրուստ դանելու համար այս
եղանակը կը բանեն նէ , ինչու որ կը լսեմք որ
Ամերիկաց մէկ մասնաւոր ընկերութիւն մը կոյ ե-
ղեր որ թէ ասանց և թէ ասանց քարոզութեամբը
բողոքականութիւնն ընդունող չքաւորներուն բա-
ւական դրամ՝ կը բաժնեն . առելի աղեկ չըլլո՞ր

արդեօք որ ուրիշ աւելի օրինաւոր չահաւ զուռ մէ
բանեն , քան թէ՝ ընտանեօք հանգերձ ծովէ ցաւ
մարէ անցնելով տեսակ տեսակ աշխատութիւննե-
րու անձնատուր ըլլալով այլաց ալ հոգւոյն կորը-
տեանը պատճառ կ'ըլլան , այն դպիիներուն և փա-
րիսեցիներուն նման՝ որոց Տէրն մեր ըառւ . «Վա՛յ
ձեզ դոլրաց և փարիսեցւոց կեղծաւորաց , զի յա-
ծիր ընդ ծով և ընդ ցամաք՝ առնել եկամսաւ մի
և յորժամ լինիցին առնեք ըզնա որդի գեհենի՝
կրկին ևս քան զձեզ» (Մատ . ԻԳ . 15) : Ասո-
ուած չընէ որ ոյս խօսքերով մենք նոյն քարոզիչ-
ներուն համար վճիռ տուած ըլլամի թէ գեհենի
որդիք են . զիտեմք որ մէջերնին փափուկ խղճմբ-
տանաց աէր մարդիկ կը գտնուին որոց մալրու-
թիւնը նախապաշարմամբ է , առանց արժանաւոր
քննութեամբ իրենց հօրմէն կամ հոգւոր հոմիւէն
կամ վարժապետէն լսածնուն ըըսնուած են : Սուրբ
Պօղոս առաքեալն ալ՝ թէսէտ շատ խմաստուն
մորդ , առեն մը Աստուծոյ եկեղեցին կը հոլոծէր .
և որբոյն Ստեփաննոսի քարկած մանն ալ կամակից
եղաւ (Գործք Է . 57) , և ուր որ քրիստոնեաց կը
զտներ նէ՝ էրիկ մորդ կամ կնիկ մորդ՝ կը կո-
պէր Երուսաղէմ կը զրկէր . ուր չարաշար կ'ըս-
սրաննուէին , կամ ինքն ուղղակի բանտ կը զրկէր
(Անդ . Թ . 3 . Ը . 2) բայց ետքը Աստուած իր ու-
զորմութեամբ զանիկաց ոյն դժոխոց ճանապարհէն
արատեց . վասն զի չզիտնալով էր ըրածը . ինչպէս
որ ինքը սուրբ առաքեալը կ'ըսէր «որ յասաշաւ

դոյն հայեցիչն էի՞ հալածիչ և թշնամանիչ . այլ
դտի ողորմութիւն . զի զայն՝ յանդիտութեան և
յանհաւանութեան գործիի» : (Ա. Տիմոֆ . Ա. 12)

Ասոր համար ովարտուկան եմք աղօթելու՝ որ սուրբ
առաքելոյն վրայ ծաղած Աստուծոյ ողորմութիւնն
ասոնց վրայ ալ ծագէ . և ասոնք ալ Աստուծոյ
ընտրութեան անօթ ըլլան զԱստուծ և անոր
յոյտնած սուրբ հաւատրը ամենայն կատարելու՝
թեամբ քարողելու չէ թէ հայոց մէջ՝ որ Աստու-
ծոյ շնորհիւը արդէն սուրբ գիրք ալ անխմք և կը
յարգեմք , դՔրիտոս ալ կը դաւանիմք . անոր ա-
նարատ արեամբը հաստատուած եկեղեցւոյն ան-
դամ ըլլալու երջանիկ բաղդը անխմք . այլ՝ թէ որ
որիւելը ոլխոփ մնան նէ՝ հեթանուներուն թաղ եր-
թան քարողեն , և իրենց հոյրենիքը ոլխոփ դառ-
նան նէ՝ քրիտոնիւթիւնը բոլորովին մէկդի ձգած
բողոքականներուն քարողեն : Ասոնկ ինչ շահ ընե-
մերնին Յակոբոս առոքեալը կ'իմացնէ . «Եթէ որ
՚ի ձէնջ մօլորեացի ՚ի ճանապարհէ ճշմարտութեան
և դարձուցէ որ զնոս . զխուացէ՝ զի որ դարձուո-
ցէ զմեղաւորն ՚ի մոլորութեան ճանապարհէն իր-
մէ , քրիեացէ զոդի իր ՚ի մահուանէ , և ծածկեո-
ցէ զրաղմութիւն մեղաց (Յոկ . Ե . 20) :

Մինչև հոս զրածնիս՝ ձեր պատսախանացն
մէջ զրուածին ալ՝ ուրիշ զրուելիքներուն ալ՝ բա-
ւական ընդհանուր պատսախան մըն է . բայց որ-
պէս զի չը կարծոի որ ամէն մէկին առանձին պա-
տսախան չի արտիր . և թէ՝ կոն մէջերնին անանեւ-

Նմեր որ սուրբ զրոց յիրառի հակառակ և մած զնզ-
ծութեան են, Կառաւորչին ժամանակին մինչեւ տաս-
ներորդ դարը Եկեղեցւոյ մէջ մտածներէն աւելի
մած, անսանց ալ տմէն մէկը աշքէ անցնեմք :

Կախապէս՝ խնդրոց կարգէն հանեմք այն բա-
ները՝ որոց մրց հայոց Եկեղեցւոյ բնդւանած և
զործածած զրբերուն մէջ բան մը զրուած չէ :
այլ ուսմիկ և աղէտ մարդոց մէջ՝ չը դիտեմք ո՞ր-
կէ մանելով սովորութեան պէս եղած է : Մեր նը-
պատակը հայոց Եկեղեցւոյն մէջ մտած մօղրու-
թիւններ դանել է, և ո՞չ թէ մանաւոր մորդոց
սնուախաղաց սովորութիւնները և աւելորդաղա-
ցաւթիւնները քննել, որոնք ինչպէս որ աղխու-
թեամբ մտած են, այն ալ տմէն աեղ չէ : Իրա-
նական հմտութիւնները աւելացնով կը վերման :
Այսպիսի բաները՝ որ թէսկէտ աւելորդաղաց որ-
նտափ բաներ են, բացց պարզ և անկեղծ կրօնու-
սիրութեան արտարին ցոցերն են, դաշտերու մէջ
բռասած աեսակ տեսակ խոտերու կը նմանին, որ
բանի մը օղուտ չունին, բացց նշան մ'են որ այն
խոտերը այն տեղաց քաղելով օդտակար բան մը
ցանուի նէ առաստ արդիւնք կը բերէ : Վասն զի այն
հողը որ այն խոտերը բաւառցեր է՝ զօրտւոր և բա-
րերեր է : Թէ որ բալորականաց հետ աւելի յա-
ճախ տեսութիւն ընէի, մանաւունդ ձեր սիրելու-
թեան նման անձանց հետ՝ որոց մտաց մէջ հաւա-
տաց կայծը բալորովին մարտած չէ, կարելի է որ
այնպիսի բաներ տեսնէի՝ որ ձեր քարտպիչները չը

Գիտեմ որ եւրոպացի բողոքականները մաս կարացեցւոց գրքերն Աստուածաշունչին դուրս ձը զած են , բայց չգիտեմ թէ դուք՝ որ անոնց ըստ ամենայնի համամիտ չէք , այս մասին Ս. Գիրքը կրամատելու և սրբագրելու համաձայնո՞ծ էք : Բայց ինչ որ է՝ սա երկու դիտողութեանս վրայ աղէկ մատեցէք : Ա. Ս. Գրոց մէջէն կտոր մը չընդունողը միւս մասցուներն ընդունելու և անոնցմէ իւր խօսքին վկայութիւն բերելու իրաւունքը կը կորսընցունէ , որովհետեւ ամէնուն վաւերական և Աստուածաշունչ ըլլազուն վկայն մէկ է . և վկայի մը մէկ խօսքը չընդունողը՝ միւս խօսքերն ընդունելու համար ուրիշ վկայ ունենալու է . և այս օրուան օրս մակարայեցւոց գիրքը սուրբ դրոց կարգը չընդունող քրիստոնեաց բողոքականներէն դատ չկայ : Երկրորդ մատեցիք , բաենք թէ այս դիրքը Աստուածաշունչ չէ , գոնէ սա ճշմարիտ է որ Քրիստոսի աշխարհ դալէն և նոր կտակարանի գրքերը դրուելէն առաջ հրեաները կը հաւատային որ կենդանեաց ողբրմութիւնը կը քաւէ ննջեցելոց մեղքը : Բայց ոչ մարգարէ մի և ոչ սուաքեալ մի այս կարծիքիա դէմ , թէ որ սուտ կարծիք մ'էր նէ , բան մի շըսին , և ոչ իսկ Տէրն մեր որ հրէից անվաւեր և սնուտի աւանդութիւնները կը պարսաւէր և անոնց դէմ վայ կը կարդար՝ վայ մ'ալ մեռելներուն համար ողբրմութիւն տալով անոնց մեղսցը թողութիւն կը ըլլոյ հաւատացողներուն շի աը-

ւաւ , կարդացէք Մատթէի աւետարանին ԵԳ . զը-
լովսը , և կը տեսնէք որ մարդարէներաւն գերեղ-
մանը շմնողաց անդամ վայ կը կարդայ (Համար 29)՝
արդեօք տեղը չէ՞ր մի որ անոնց ալ վայ կարդար ,
որ իրենց տուած ողորմութեամբը մեռելոց մեղքը
թողուելուն կը հաւաստան . և ասով իրենց դրամը՝
պարագ տեղը մնխած կ'ըլլան :

Մակարացեցւոց գրքէն առնուած վիրայութիւնը
մի և նոյն նալատակաւ կ'առնու մեր աղջին քրիս-
տոնէութիւն սովորեցնող Ա. Լուսաւորիչ հայրն ալ
և նոյն խօսքին կարդը այս գրքիս ալ Ա. Գրաց կար-
դըն ըլլաղը կը հաստատէ . և ահաւասիկ անոր խօս-
քը . « Ի զորա Մակարացեցւոցն երեի յոյս , որ զնիւ
հեթանոսացն ունելով անկան 'ի սրատերադին , և
զնոցա աւարն ետուն ցքահանայսն , զի աղքատաց
բաշխեացեն 'ի քաւութիւն մեղաց նոցա վրիսելոցն
'ի ճշմարտիցն . Եւ զի գիրք են մեզ վարդապետք , և
'ի ձեռն նոցա զյաւիտենից յոյսն ընկրոցուք , զի
նորօք վարեսցաք յաշխարհիս , և ճշմարտեալք
սուրբ սիրով փոխեսցուք 'ի կենդանի յոյսն և յե-
րանութիւնն որ իր և մնայ » . (Յամակ . ճառ ԺՅ.
Երես 176) վերջի ըսած խօսքերն Աստուածաշունչ
գրոց համար ըլլան անտարակուսելի է , և այն ալ
յայտնի է որ այս խօսքերս Մակարացեցւոց գրքին
Աստուածաշունչ ըլլաղը կը ցըցունէ , ուրիէց առած
օրինակովը իր վարդապետութիւնը հաստատեց :
Պատասխանատուն իր խօսքերաւն կարդը կ'ըսէ ,
« Հայր կը հաւաստան թէ այս փոխարինութիւնը՝ մե-

ոելոյն մեղաց քաւութեանը համար կենդանւոյն ըստ նելու վճարքը՝ կ'ըլլաց, մանաւանդ քաւչարար պատարագին արդիւնքը. զոր յիշատակը ծախու պարագի առնուու ՚ի պատարագիչ քահանայէն. որ կը զոհէ զՔրիստոս ՚ի քաւութիւն մեղաց կենդանեաց և ննջեցելոց»։ Այն մէկդի ձգելով՝ որ քահանային տրուած ողորմութիւնը իրբեւ ծախու առնել մը կը սեպէ, որով ամէն ողորմութեան գործք՝ որով աստուածային բարերարութենէ շնորհը մը կը խընդուրին, նոյն շնորհը ծախու առնելուն կարգը կը մտնէ, աս կ'ըսեմ որ Ա. Լուսաւորիչը՝ ննջեցելոց հագույն համար Ա. Պատուարագին օժանդակութիւնը խնդրելն ալ սովորեցուցած է հաւատացեալ ժողովը դեռէան. և ոչ այս միայն՝ այլ և անոնց համար ուրիշ բարեգործութիւններ ալ ընել կը պատուիրէ, ահաւասիկ Ա. Հոյրասպետին խօսքը. «Յառաջագոյն մեղացելոցն և սույզ խօսավանողացն և սպաշխարողացն՝ միշտ կատարեսոցին յիշատակը նույա. և որ ՚ի ժամ ելանելոց յաշխարհէս դդջանսան։ Այլ և բազում՝ բարիս պարա է ցուցանել մնացելոցն՝ յաղագս հրաժարելոցն յաշխարհէս։ Զկատեալս արծակել, զպարտութողուու, զկարօտեալս լցուցանել բարութեամբ»։ (Յաճախ. ճառ ԺԴ, Երես 190)։ Յաճախալատումին այս տեղս որ քիչ մը երկացն ըլլալուն համար այսքանս միայն օրինակեցինք, մասպատճեամբ կարդալ կառաջարակեմք ձեզ։

•Քրիստոնէական ընդհանուր եկեղեցին ամէն

ատեն այնպէս հաւատացած է որ մարդ մը գործած մեղքէն դղջաց և խոստովանած ատեն իրնն սրատ ու իրուած ապաշխարութիւնը չկարենայ կատարել, որ մեղքերուն կատարեալ արձակում գտնելու համար դրուած պայման մի է . և խոստովանած ժամանակ առած արձակումը այն պայմանը կատարելուն վրայ է , բայց ինք չկատարած մեռնի , ամէն կարանքէ արձակուելով յաւիտենական երազանկութեան հանելը՝ եկեղեցւոյ օժանդակութեամբ , և նոյն ննջեցելոյն համար Ա. Լուսաւոր չին վերոյդրեալ խօսքին մէջ ցըցուցած բարեգործութիւնները կատարելով կ'ըլլաց : Այս այսպէս շընդունելովնիդ , սա երկու բանին մէկը ընդունած կ'ըլլագ , կամ մեղքէն տակաւին կատարեալ չըսրբուած մարդիկ որ մեռնելին ետքը անոնք ուըրարելու և Ցեսոն մերոյ չարչարանացը արդեանց հաղորդ ըլլալու վիճակին մէջ չեն , որով միայն կ'ըլլաց յաւիտենական կեանքը , ոյնպիսիները ինչպէս որ են նէ անանկ արքայութիւն սլիտոր մըտնեն , կամ ըսելու էք թէ այնտիւի վիճակի մէջ մեռնողները յաւիտեան դժոխոց սլիտոր դատապարտութիւն : Առջինն ըսողներ կան բողոքականաց մէջ . բայց Ա. Գրոց մէջ շատ տեղեր ասոր հակառակութ գրուած ըլլալով անոնց ըսածը խախուռ կելնէ . և ձեզ համար չեմ կարծեր որ այս մասին անոնց հետեւիք ։ Հետեւու վկայութիւններս առ այժմ ձեզ բաւական թող ըլլան : Պօղոս առաքեալը առ եփեսացիս կ'ըսէ , և Աի տէր , մի հաւատք ,

« մի մլլրտութիւն մի . Աստուած և հայր ամենեւ
« ցում , որ 'ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին
« և յամենեսին ի մեղ : Ա.ՅԼ խրաքանչիւր ումեք 'ի
« մէնջ տուեալ են շնորհք ըստ չափու սլարդեացն
« Քրիստոսի . վասնորոյ և ասէ , ել 'ի բարձունս և
« գերեաց զգերութիւն , և ետ պարզես մարդկան,
« որ են զի՞նչէ , եթէ ոչ՝ զի էջ նախ 'ի ստորին
« կողմը երկրի » . ասով Տեառն մերոյ մարդկային
ազգին տուած պարգևը՝ անոր մարդեղութեամբ
տուածները կ'իմացնէ որոց համար նոյն առաքեալը
որիշ առիթով մը խօսելով՝ ան ոգեղջ են շնորհք և
կոչումն Աստուծոյ ըստեւ (Հոռվ. ԺԱ. 29) : Բայց
ասիկայ ալ պայմանի մը կապուած ըլլալը կը նշանաւ
կէ , առ Եփեսացիա գրածը շարունակելով կ'ըսէ ,
« Արդ զայս ասեմ և ուխտեմ ի Տէր , մի ևս ձեղ զնոյն
« օրինակ գնալ . որպէս և այլ հեթանոսք զնան ու
« նայնութեամբ մտաց խրեանց . . . այլ դուք ոչ
« ասսպէս ուսարուք գՔրիստոս , թէպէտե լուարուք
« զնմանէ և նովաւ ուսայք , որպէս է ճշմարտու-
« թիւնն Քրիստոսի : Ի բաց մերկանալ 'ի մէնջ ըստ
« առաջին գնացիցն զմարդն հին՝ զապականեալն
« ցանկութեամբ խարէութեան . և նորոգել հոգեով
« մտաց ձերոց , և զգենուլ զնոր մարդն որ ըստ
« Աստուծոյն հաստատեալ է , արդարութեամբ և
« սրբութեամբ ճշմարտութեանն : Վասնորոյ 'ի բաց
« ընկեցէք զսառութիւն » ևն . (Եփես . Դ. 5-10 և
17-25) զլուխը լման կարդալու էք որ խմանաք թէ
հաւատացեալք միայն Քրիստոսի շնորհքով կարդա-

բանամք ըսելով չեն աղատիր . իրենց կողմէն բարի գործքերով ալ անոր արժանի ըլլալու են : Այս պիսի բարի գործոց մէջ կան որ ննջեցելոց համար գործելով՝ օգուտն անոնց ալ կը տարածուի , բայց թէ որ իրենց համար չընեն , Քրիստոսի մարդեղութեան և չորչարանաց արդիւնքը անոնց օգուտ չըներ . վասն զի մէկ կողմէն Քրիստոսի չնորհքով պիսի սրբութին նէ , միւս կողմէն իրենց բարի գործովն ալ պիսի սրբութին . ասոր համար կ'ըսէ Ս. Առաքեալը , « Կատարեացոք զարբութիւն ահիւն Աստուծոյ » . (Յ. Կորթ . Է. 1) : Ենթադրելով որ Ս. Գիրքը և մանաւանդ նոր կտակարանը կարգալով ասոնց տեղեկացած էր , որ շատ պարզ աւ զրոցուած են . վերոյիշեալ բոլոքականաց խօսքին չէր կատուած , և բարեգործութիւնը անօգուտ չէր սեպեր , և չէր ըսեր թէ արքայութիւն կը մտնեն և յաւիտենական փառաց արժանի կ'ըլլան անանկ մարդիկ՝ որոց համար Ս. Յովհաննէս աւետարանիչ ըսած է « Ոչ մոցէ անդ ամենացն չարակամ և պիղծ և ստութիւն » (Յայտ . ԽԱ. 27) . Թէ որ անոնց չէր համաձայնիր նէ , ըսել հարկ կ'ըլլաց թէ այս աշխարհիս մէջ մեղաց թողութիւն չգտնող մարդոցն ինչ և է կերպով անհնար է թողութիւն գտնել մեռնելին ետքը : Եւ որովհետեւ Տէրն մեր մարդոց մեղաց արձակում տալը կամ կտակելը առարելոց յանձնեց , որացմէ անոնց յաջորդներուն անցած է ըսելը հարկ է , ինչպէս որ վերը տեսանք , այն խօսքը՝ զոր իրեւ լուսաւորչական հա-

յոց հաւատոց մաս մի սեսլածի պէս մէջ բերած էլք
թէ քահանայն մէկու մը արձակում չտայ նէ Աստ-
ռած ալ չունի իշխանութիւն անոր արձակում
տալու, ասիկայ անանկ խօսք մ'է որ հայոց մըտ-
քէն ալ անցած չէ, բայց ձեր ըսածին հետեւու-
թիւնն է :

Պիտեմք որ հանդերձեալ աշխարհը թերի ա-
պաշխարութեամի գնացող ննջեցելոց մեզացը
քաւութիւն կ'ըլլոյ անոնց համար կենդանեաց ը-
րած բարեգործութեամբը ըսելէն կը վախնար,
տակէն քաւարանն ընդունիլ կելնէ ըսելով, սակայն
այն երկիւղներէն է սախկայ որոյ համար մարդա-
րէն կըսէ « անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ եր-
կիւղ » (Սաղմ. ԺԳ. 8) : Այս վախնալը լոկ անու-
նէ մը վախնալ է և ասկէց ալ սնոտի և ծիծաղա-
կան վախ չըլլար : Բոլոր քրիստոնեայ ազգեր բուն
վարդապետութիւնը կ'ընդունին . չընդունածնին՝
քանի մի լսթին աստուածարաններուն յաւելուածն
է թէ այն տեղ մնացած հոգիները զգալի կրակով
կը տանջուին՝ մինչև սրբուին վրանին մնացած աղ-
ակէն : Անոր համար անանկ անուն մի զրած են
այն տեղին՝ որ մարդուելու տեղ ըսել է, հայերէ-
նի թարգմանողները անանկ բան մի դրեր են՝ որ
նախնիք այն մասը գործածած չեն . ձեղ չվայե-
լեր բառէ մը վախնալ տղայի պէս :

Հայք ծոռ վարդապետութիւն մի ունին եղեր,
և այս է եղեր, « մարմինը նեղուելով հոգին կը-
մաքրի » ըսելնին : Մարմինը նէղելը երկու կերու

իլիմացուի , մէկը՝ մեզանչական ախորժակը զնալել ,
այսինքն՝ մեղքէ ետ կենալ և առաքինի գործերու հե-
տեւիլ . միւսը՝ անանկ բաներէ ետ կենալ որ ինքնին
մեղանչական չեն , բայց կրնան առաքինի գործոց
արդելք ըլլալ : Առաջիններուն համար առաքելա-
կան խօսքերէն առնելով վերը գրածնիս՝ որուն նը-
ման խիստ շատ կայ սուրբ գրոց մէջ , բաւական
են : Երկրորդ տեսակն են պատասխանատուին խօս-
քին կարդը համրածները՝ որ են , « ճգնաւորու-
թիւն , մի քանի աեսակ կերակուրներէ պահեցո-
ւ զութիւն և ամիսներով ծոմալահութիւն , թեր-
և ևս և կուսակրօնութեւն , նաև ապաշխարանաց
սգործերէն մէկ քանին (որպէս թէ ըսածները ա-
պաշխարանաց գործ չըլլային ,) ինչպէս են սող-
մու քաղել , նարեկ կարդալ , և ժամ ընել : »

Առաջինին վրայ ասկէց առաջ գրածես զատ
ըսելիք չունիմ : Երկրորդին վրայ կարծեմ՝ անով
համարձակութիւն առած են բողոքականք . որք բո-
ղքական չեղող քանի մը գրադէտներ ալ կամ
իրենցմէ կամ օտարադդի և օտարակրօն հեղինա-
կի մը գրածէն թարգմանելով դէմ խօսած են : Ա-
սոնք չգիտնալով բողոքականութեան որոգայթն ին-
կած ըլլոլով՝ խօսքերնին չըլլար . և մեր հոս զրե-
լիքները անոնց գրածին ալ հերքումն են :

Չեր պատասխանատուին համրածներուն ա-
ռաջին չորսը մասնաւոր սկզբան մը հիմնեալ են ,
որ է այս , մեղքը գործելէն վերջը զղջալ , և մէկ
մ'ալ չգործելու առաջադրութիւն ընելը բաւա-

կան չէ . աւելի զօրաւոր միջոցի մի դիմել պէտք է : Ընկերութեան մէջ կենալը շատ դգուշութեան կարութէ , որ ուրիշներուն օրինակին հետեւելով ինքն ալ չաւրուի : Ընկերութեան մէջ աղէկ մարդիկ սրաւ կաս չեն , բայց գէշերը քիչ ալ ըլլան՝ օրինակին աւելի աղջու կըլլայ : Ասոր համար կարգ մի մարդիկ ընկերութենէն կղատուին և կամ մինակ լեռները կը պտըտին և քարայրներու մէջ կը բնակին , կամ քանի մի հոգի միաբանելով մէկ առանձին բընակարան մի կունենան և հոն կապրին , և ասանկները իրենց ապրելու եղանակը կանոնի տակ տուած կըլլան : Այսպիսիներ շատ հին ժամանակներ ալ կրոյին : Սրբազն Առաքեալը հին օրինաց ատենը գտնուող միայնակեացները գովելով կ'յիշէ , « զորը ոչ արժէ աշխարհ » . յանտափատի մոլորեալք 'իլերինս յայրս և 'ի փապարս երկրին (Երր. ՖԱ. 38) : Սրբազն Առաքեալը ինքն ալ ճգնութենէ օտար չըլլալը կը վկայէ , և պատճառն ալ կյոյտնէ իրեն համար ըսելով , « ես խակ այնպէս ընթանամ , ոչ որպէս յաներեւոյթս այնպէս մրցիմ , որպէս թէ « զհողմս կոծելով , այլ ճնշեմ զմարմինա իմ և հը « նազանդեցուցանեմ , զի գուցէ որ այլոցն քարու « զեցի , ես ինքն անպիտան դտանիցեմ . » (Գ. Կոր. Թ. 27) : Այս խօսքէս կերեի որ Ա. Առաքելոց ժամանակն ալ մարմին ճնշել և հնազանդեցընելը հովերը ծեծելու պէս պարապալ աշխատաւթիւն սեպողներ կան եղեր , թող ճգնութիւնը պախարակող հիմակուան զրագէտները տեսնեն թէ ինչ :

ոլէս մարդոց կարգը մտնել կընտրեն :

Բնական է որ այս ձանրան իրենց համար ընտրող մարդիկ իրար գտնեն նէ զատուիլ չեն ուղեր, մէկտեղ բնակիլը տեղի ախորժելի կուգայ իրենց, և ժամանակ անցնելով երբ մէկ տեղ ապրելու հաստատուն կերպ մի ունենալու ալէտքը կղզան՝ հասարակաց կանոն դնելու կմիարանին և կըլլան վառական ճղնաւորներ :

Մեր Ս. Կուսաւորիչը այս երկու կերպն ալ մեր ազգին մէջ ճգեց : Կեսարիային դարձած ատեն սուրբ Ղեոնդիոս հայրապետէն խնդրելով Անտօն և կրօնիդէս ճղնաւորները՝ բերաւ հետը, որոց համար նոյն Ս. Հայրապետին շնորհակալութիւն դրելով կըսէ . « ՚ի նոյն իննակինեան տեղուջն՝ (ուր « Ս. Կարապետին և սրբոյն Աթանագինեայ մաստոն՝ « քը թաղած էր) թողի զերկոսին կենդանին Անտօն՝ և զկրօնիդէս, զորա դու ըստ սիրոյ քո և ընծայեցեր զնոսա աշխարհիս հայոց, որոց և եղաւ իսկ են զիւրեանց մարմինս կենդանի ՚ի խաչ « ելանել ընդ Քրիստոսի . վասն այլոց օգտի մտաց « ՚ի մարմին, զոր իրրե զանդիւտ մարդարիտ համար « քիմ՝ զնոսա տուեալ ինձ » (Զենոր. եր. 8 :) Սուրբն Ղեոնդիոս ալ այս նամակիս պատասխան դրելով կըսէ, « կացուցանես զդոսա ըստ օրինաւ « իի այսր կրօնաւորացս, զոր տեսներ ՚ի մերում վիճակիս, զոր և ՚ի սրբոյն Անտօնէ ուսցիս զկարդ և ճղնութեան, զի ոչ իւիք պակաս է քան զտուածինն Անտօն » (Անդ. եր. 10 :) Առաջին Անտօն ըստ

սոնցը՝ Ա. Անտօն անսախատական ճգնաւորն է . որ
թէպէտ աշակերտներ ստանալով վանական կարդ
մը հաստատեց յատուկ կանոններով , բայց ինք ա-
մէն ատեն քովերնին չէր կենար , յաճախ կա-
ռանձնանար ներքսագոյն անսալատը երթալով :
Այս սուրբ անսալատականս մինչև լուսաւորիչին
ժամանակը ասլրեցաւ : Ա. Լուսաւորիչ ճգնաւորա-
կան կարգեր հաստատեց՝ ինչպէս որ սուրբն Ղեղնդի-
ոս ուզած էր , և ասոնց մասնաւոր հրահանդ ալ-
տուաւ . որ է Յոմախասրատում զրքին ԽԳ Պլուխը ,
ուր զրածները վանականաց համար Ըլլալը յայտնի
կընէ , (Եր. 276 .) իրենց ասաջնորդին հնազանդ
կենալ պատուիրելով , որպէս զի միաբանութեան
կապը չքակուի :

Անապտոտական կենաց մէջ Ա. Լուսաւորիչին
ողդտիկ տղան Ա. Արիատակէս՝ հօրմէն առաջ մտած
էր . քանդի երբ Ա. Լուսաւորիչ ճգնելու համար
լեռները անծանօթ տեղեր կերթար կը բնակէր՝ և
երանելի Տրդաստ թագաւորին աղաջանքն ալ մտիկ
չէր ընէր՝ խմացուցին թագաւորին որ Ա. Հոյրա-
պետը երկու զաւակ ունի , մեծը՝ Ա. Վ. թանէս՝
ամուսնացեալէ . խակ պղտիկը «ի մանկութենէ ըստ
ատառածագործ ծառայութեան սնեալ էր . որ 'ի
և մենակեաց լեառնակեաց կրօնս մտեալ էր , և բա-
ռ զում աղջի աղջի վշտակեցութիւն ըստ աւե-
ստարանին կրեալ ամենայն կրթութեամբ , և ա-
ռ մենայն իրաց հողեռորականաց զանձն տուեալ մե-
ռնաւորութեան լեառնակեցութեան , քաղցի և ծա-

« բաւոյ և բանջարաձաշակ կենաց և արգելանաց սանլուսից » ևն. (Աղաթ. Եր. 686 :) Կարծեմ Ս. Լուսաւորչին լեռները երթաւ անծանօթ տեղեր ճգնելն ալ զիտէք . մինչև անգամ վախճանի տեղն ալ տարիներով անյայտ մնաց :

Մի քանի տեսակ կերակուրներէ պահեցողութիւն ըսածնիդ ալ ճգնաւորութեան մէկ պահութիւն է , բայց այս բնաւ չէլք ալ յիշեր , թէ որ մտքերնիդ դար որ Աստուած միայն մէկ տեսակ սլտուղէ մը պահեցողութիւն հրամայեց Աղամայ . զոր մտիկ չընելով մարդկային ընդհանուր աղղին որքան վեսա ընելն աչքովեխա կը տեսնենք ամեն օր : Ընդհանուր եկեղեցւոյ աւանդութեան հետեւելով Ս. Հայրապետը իր ժողովրդեան ալ պահեցողութիւն կողատուիրէ , և ասոր օգուտները հասկընալու համար պէտք է որ կարդաք Յամախապատումին Թ. ճառը . որուն մէջ՝ աս խօսքը նշանաւոր է մեր ըսածը հաստատելու համար թէ մեղաց առիթներուն առաջը առնելու համար է : « Պահք շիջուցանեն և զբորբոքեալ հուրն ցանկութեանց , դի որպէս հուր և 'ի նիւթոյ պակասեալ շիջանի , նոյնպէս և որովայ և նամոլութիւն և արբեցութիւն պակասեալ , ցանկ կութեանն բոց շիջանի , և սրբութեանն և արդաւ « բութեան բորբոքի պահօքն ալնդեալ : » Տե՛ս որ մէկ առաքինութիւն մը՝ զոր դուք բանի տեղ չէք դներ , և մեր զայն յարդելունս համար զմեղ ալ կանարդէք , երկու մահացու մեղաց մէկէն առաջը կառնէ եղեր , որկրամոլութեան և բղջախոհու-

թեան : Զեր բողոքական քարողիչները այս նորա-
տակաւ ի՞նչ կտատուիրեն ձեզ , գիտնալ կուղէի :
Եւ որպէս դի այս ըսած պահը ծոմալահութիւն չի
կարծէք , (թէսկէտ զայն ալ չէք ընդունիր) , Ա-
Հայրապետն ինքն կիմացունէ որ քանի մի տեսակ
կերակուրներէ սրահեցողութեան համար ըսած է ,
կըսէ « առաւել ևս զգուշացուցանէ բանս խրատու
ի գինոյ և 'ի մայ » (Եր. 113 :) Եւ որպէս դի
մէկը ըսէք որ Ա. Առաքեալը կերակուրներէն ըղ-
գուշացնելը դիւաց վարդապետութիւն կըսէ (Ա.
Տիմօֆ. Ե. 3) , գիտնալ պէտք է որ Ա. Առաքելոյն
խօսքը անոնց համար է որ մէկ քանի տեսակ ու-
տելիքներէ բոլորովին կարգիլէին , և բնաւ մէկ ժա-
մանակ ուտելու հրաման չէին տար , և այս է մեկ-
նել այսինքն զատել 'ի կերակրոյ ըսածը : Իակ ե-
կեղեցւոյ սովորութիւնը , որուն թարգման եղած է
մեր Ա. Հայրապետը՝ ուտելու և սրահելու օրեր կո-
րոշէ . « այժմ քարողեցու մեզ պահք , յո՛ր ա-
ռւուրս պահելի է և յո՛րս լուծանելի , որպէս օրի-
սնադրեցաւ 'ի մարգարէից և յառաքելոց և 'ի
ստուրբ հարց մերձաւորացն Աստուծոյ » (Անդ. Եր.
104) : Իակ ամիսներով ծոմապահութիւն ըսածը՝ որ-
պէս թէ այն ալ ունեցած ըլլան լուսաւորչականք ,
անտեղի է : Ո՛ր ամիսներն են եղեր որ լուսաւոր-
չականաց պատուէր եղած ըլլայ ծոմ բռնելու , և
ու՛ր զրուած է եղեր այդ պատուէրը կամ խրատը:
Արդեօք մեծ պահքն ըսել կուղէ , բոյց այն՝ ա-
միսներով ալ չէ , ծոմալահութիւն ալ չէ : Տարին

մէկ անգամ միայն մեծ սլահը ունիմք , անոր չետ
թէպէտ ծոմ ալ կոյ , բայց ամիաներով չէ , շա-
բաթներով է . շաբաթը միայն հինգ օր՝ շաբաթէն
և կիւրակիէն զատ . և օրերն ալ առաւօտէ մինչեւ
երեկոյ ալ չէ , որ բուն ծոմալահութիւնը այնպէս
սլիտոր ըլլայ , այլ ցերեկուան ժամելոգութենէն
ետքը ծոմը կը լուծուի : Արդեօք նոր քահանոյ ձեռ-
նաղբուղներուն համա՞ր է , բայց այս ալ խիստ
մասնաւոր բան մի է , բոլոր կենաք մէջ միայն մէկ
անգամ այս ծոմն սլիտոր սրահէ , և այս ալ մաս-
նաւոր պատճառ . և օրինակներ ունի : Ժողովրդեան
առաջնորդ և քարոզիչ սահմանուած է . և ինչ սրա-
կասութիւն է՝ երբ Մովսէս մարգարէին ասսուած-
ոյին սրտոդանները խրայելոցոց համար առնե-
լին առաջ քառասուն օր ծոմ՝ բանելուն . և Տեա-
ռըն մերոյ մկրտուելին ետքը և քարոզութիւն ընե-
լէն առաջ դարձեալ քառասուն օր ծոմ՝ բոնելուն
նմանութիւն մի ըրած ըլլայ : Կրնաք Եղիա մար-
գարէին ծոմն ալ յիշել :

Կուսակրօնութիւնն ալ ասոնց կարգը դրեր
է . մէկ քերես բառ մ'ալ տւելցնելով , որուն միտ-
քը թէպէտ չեմ հասկացած , բայց մեր խօսքե-
րուն հետ յարաբերութիւն մը չունենալուն համար
կարեւորութիւն ալ չեմ տար : Բուն խնդրոյն վրայ
խօսելու յարմարութիւն ունենալու չեր մեր սրա-
սասիսանատու սլարոնը . որովհետեւ հայոց եկեղեց-
ւոյ զաւակ է , և նոյն եկեղեցւոյ սովորութիւնը
դիտնալու վիճակի մէջ ծնած և մեծցած է . ասով

իրաւունք կուտամք ընդհանրապէս հայոց եկեղեցին ձգելով բողոքականութեան դիմողներուն համար բառածին թէ՝ ո՛չ իրենց ձգած եկեղեցիին հաւատքը և սովորութիւնը զիտեն և ո՛չ այն ընկերութեանը՝ որուն անդամ կը գրուին։ Հայոց եկեղեցին երբէք մարդու կուսութիւն սբատուիրած չէ, ոչ իրրեւ մասնաւոր կենաց վիճակ և ո՛չ իրրեւ աւաշխարական գործ։ և ասիկայ հասկանալու համար կուտարիւն բառին ճիշդ նշանակութիւնը մըսքէ հանելու չէ, որ է բնաւ չամուսնանալ։ Ըստ ծիս ամէն ասոեն և հիմոց ալ ապացոյցը կը տեսնը ուի որ արդէն ամուսնացեալ մարդիկ սուրբ սեղանոց ալաշտօնէութեան ընդունուած են միայն առժամանակ մի իրենց ամուսինէն զատուելու պայմանու առաջանաւու . զոր սուրբ առաքեալն կ'ըսէ առհասարակ ամուսնացելոց ալատուիրելով։ « մի զրկէք զմիմետնըս, բայց զի եթէ ինչ՝ 'ի միարանութենէ՝ առժամանակ մի, զի ուխտիցն պարապիցէք, և դարձեալ 'ի նոյն դարձնիք, զի մի փորձեսցէ զձեղ սատանայ վխան ամիսառնութեան ձերոյ»։ Ա. Կոր. Է. 5) Ուստի ամուսնաւոր սարկաւագ և քահանայ ամուսիններնէն զզատուելով՝ եկեղեցւոյ սբաշտօնին ընդունուած են։ Ամուսնացեալ մարդիկ՝ վարդապետ եւ պիսկոս և կաթուղիկոս ալ եղած կան։ միայն թէ ասոնց ամուսինները մեռած ըլլալու են, կամ՝ դոնէ թէ որ կենդանի են միարան հաւանութեամբ իրարմէ զատուած ըլլալու են։ Եւ եկեղեցական կոնոնց մէջ բարեկալաշտութեան սբատճառով առանց

կողակցին հաւանութիւնն առնելու, դատուղներուն նզովք ալ կայ : Կին չունեցող մարդիկներուն միայն թոյլ արուած ըլլալուն՝ որ եկեղեցական բարձրագոյն աստիճանի հասնին՝ պատճառ այն է որ սարկաւագութեան և կիսասարկաւագութեան աստիճանն առած ատենէն դիտնալու և ուխտ ընելու է, որ կինը մեռնելին ետքը դարձեալ չամուսնանայ, որ իրեւ ժուժկալութեան և մարմնական կիրքը զսովելու նշան՝ և աշխարհական նաց մէջն ալ անգամ՝ գովելի սեպուած է, և վայելուչն այն է որ եկեղեցականք ալ այդ գովեստին արժանի ըլլան : Բարձրագոյն աստիճանաւրաց ալ կին չպահելու պատճառ մի կը ցըցունէ Ա. Առաքեալը . «Որ անկինն է հոգայ զՃեառն՝ թէ որպէս հաճոյ լիցի Տեառն, և որ կանամրին է հօգոյ զաշխարհիս թէ որպէս հաճոյ լիցի կնոջ խրում։ Կոյսն հօգայ զՃեառն զի իցէ սուրբ մարմնով և հոգւով, և առնակինն հոգայ զաշխարհիս թէ որ պէս հաճոյ լիցի առն խրում» (Ա. Կոր. Ե. 32-34):

Եւ թէպէտ մարդ ստիպուած չէ բնաւ չամուսնանալ և կուսութեանք կեանք անցունել, բայց խրեանց յօժար կամաւ այդ վիճակն ընտրողներն ալ կը գովէ և վանական կրօնաւորաց կարզը կ'ընդունի, որոցմէ կ'ըլլան սովորաբար կուսակրօն քահանայ կամ վարդապետ և եպիսկոպոս և կաթողիկոս . և թէպէտ ասոնք հարկաւ եկեղեցական ըլլալու ստիպուած չեն՝ այսու ամենայնիւ Ա. Կուսաւորիչ հայրապետը ասոնց մասնաւոր պատիւ

մը ցըցունելու պէս եկեղեցական կարգը կը դասէ
Յաճախասպատումին մէջ. (Երես 168) « ՚Ն բարերար
կամացն Աստուծոյ արբանեակը լինին սիրելեաց
նորա (Աստուծոյ) վերջին զօրքն առաքելոց, մար-
դարէից, ուղիղ վարդապետաց, վիայից սրբոց,
քահանայից, կուսանաց, և ամենայն ճշմարտափ-
րաց, որք առաքինութեամբ նահատակին ի փըր-
կութիւն անձանց և մերձաւորաց » : Կուսութիւնը
մեղ մասնաւորապէս գովելի ցըցնողներն են նա-
խառէս Տէրն մեր, որ ասոնց ներքինիի պէս ան-
դաւակ մնալուն համար ներքինի կոչելով կըսէ
« են ներքինիք որ զանձինս խրեանց արարին ներ-
քինիս վասն արքայութեանն երկնից » բայց հարե-
շդներ . « որ կարողն է տանել տարցի, » կըսէ,
(Մատ. ԺԹ. 12 :) Երկրորդ, Ա. Առաքեալը « ու-
սմուրեացն (այսինքն բնաւ չամուսնացողներուն)
և այրեացն ասեմ, լաւ է նոցաթէ կայցեն իր-
արե զիս, ասլա թէ ոչ ունիցին ժոյժ՝ ամուս-
« նաացին . . . որ ամուսնացուցանէ զկոյսն խր,
« բարւոք առնէ, և որ ոչն ամուսնացուցանէ լաւ ևս
« առնէ » (Ա. կոր. Ե. 8-38 :) Տէրն մեր և սուրբ
Առաքեալը կուսութիւնը կգովեն : և եկեղեցին ա-
սոնց կձայնակցի : Բողքականները կուսութիւնը
կըսպասաւեն, և բնութեան արարչին գոված վի-
ճակը բնութեան դէմ է կըսեն, և կուսութիւնը
ուխտողը Աստուծոյ դէմ հայհոյիչ կը սեսլեն : Ա-
հա երկու կողմն ալ կը ցուցնեմ ձեղ . ասոնց ո՛-
րին հետևելիքնիդ ձեր խղճմտանքին հարցուցէք ,

միայն սա գիտնալիոդ բաւական է որ կուսակրօս նութիւնն ալ ոչ սուրբ գրոց հակառակ է և ոչ աստուածային յայտնութեան անհամաձայն. ոյլ կուտերի եղած դիւական յայտնութիւնը՝ որ ինքը կուսակրօն քահանայ ըլլալով կուսանաց վանքէն աղջիկ մը դլիսէ հանելով ամուսնանովէն ետեւ կուտերի եան դէմ պարսաւ և նախատինք գրել և խօսիլ սկսու : Այս այդպիսի յայտնութեան մը անհամաձայն ըլլալնիս մեզի պարծանը է :

Պատասխանատուն յայտնորեան հոգոյն անհամաձայն կամ սուրբ գրոց հակառակ կը սեպէ քանի մը ասդաշխարսանաց գործերը . ինչ ալէս են . կըսէ , « Սաղմոս քաղել , Նարեկ կարդալ և ժամ ընել » : Մէկ մը մըսածեցէք որ Սաղմոս ըսածը Աստուածաշունչ Ագրոց մէկն է , և երբ այդ պարզամիտ անձին վարպետ եղող խմաստուններեն լսէք թէ , Սաղմոս քաղելը սուրբ գրոց հակառակ կամ յայտնութեան ոգոյն անհամաձայն է , չէ՞ք ըսեր արդեօք թէ այդ մարդկի ինչ ըսելնին չը դիտեն : Նարեկը ազօթքի և միանգամայն մեղաց համար զԱստուածադաշելու գիրք մըն է . այս ալ կարդալը աղէկ չէ երեցեր անոնց . նմանապէս ժամ ընել որ է Աստուծոյ տմէնուրեք ներկայ գտնուիլը գիտնալով անոր երեկորդագութիւն ընելը : Մենք կը հարցնեմք ձեզի՝ որ բողոքականաց հաւանած էք և անոնց կը հետեւիք . այս ձեր առաջնորդներումն չը հաւանած բաները վերցունէք նէ՝ տեղը դնելիք ի՞նչ ունիք : Եւ ձեր վար-

սլետներուն հարցուցէք . թող անսնք ալ իրենցինք
զիտունին հարցնեն , գիտե՞ն և լսա՞ծ են աշխար-
հի մէջ ո՞չ թէ քրիստոնեայ՝ այլ հեթանոս և կը-
ռասլաշտ ազգ մը , միայն թէ զիտնայ որ Աստուած-
կայ , և ոչ ճգնաւորութիւն ըլլայ մէջերնին , ոչ
պահեցողութիւն և ոչ ամիաներով ծոմապահութիւն .
ոչ ամուսնութենել առ ժամանակեայ կամ մշտըն-
ջենաւոր կերպով հրաժարիլ . ոչ սուրբ գիրք կամ
աղօթքի գիրք մի կարդալ . և ոչ մարմնով Աստու-
ծոյ երկրապագութիւն ընել . և ի՞նչպէս բոլոր մարդ-
կային ազգին մէջ նմանը չը գտնուած բաներ ոոր-
վեցնողներուն կը հետեւիր . զարմանալու արժա-
նի բան :

Վերսոյգրեալներուն արժանաւոր սուտով մը
եկեղեցին զբարարուելով այս խօսքերը կը վերջու-
ցընէ պատսախանաւուն : Որպէս թէ հայք կըսեն
եղեր որ ասուրեր և հրեշտակներ չնորհատու են
մարդոց » : Ասուրերուն բարեխօսութիւնը ծուռ
հասկըցած ըլլայը բաւական խօսած եմք ասկէց ա-
ռաջ , և հոս կը կրկնեմք որ՝ մէկոն համար Աս-
տուծմէ չնորհք ուզողը որ է բարեխօսութեան դոր-
ձը , ինք չնորհատու եղած չըլլար : Հրեշտակնե-
րուն համար ալ նոյնը հասկըցէք , և սուրբ գրքէն
առնուած սա խօսքերը ազէկ մտքերնիդ պահեցէք:
Ուրիշները չը հաւնելով արհամարհողներուն խրատ
կուտայ Տէրն մեր ըսելով « Զգոյշ լերուք մի ար-
համարհիցէք զիի ՚ի փարրիանցս յայսցանէ . զի հը-
րեշտակը նոցա յերկինս հանասլաղ տեսպնեն զե»

րեսս հօր իմոյ որ յերկինս է » (Մատթ. Ժ. 40)։
Հրեշտակներուն մարդոց կողմէ առ Աստուած և
Աստուծոյ կողմանէ առ մորդիկ միջնորդ ըլլալն ու-
րացողը Տեառն մերոյ այս խօսքին մէջ ի՞նչ կապ
կը գտնէ : Այն փոքր մարդուն հրեշտակը երկինքը
կը գտնուի եղեր բայց այն մարդը երկրիս վրայ է ,
և երկինքին հրեշտակը ի՞նչպէս աշխարհիս վրայ
գտնուած մարդունը կրլայ : Եւ դարձեալ , արհա-
մարհեալ մարդուն հրեշտակը՝ որ իր քովն ալ չէ ,
երկինքն է , և ամէն ատեն Հօր Աստուծոյ երեսը կը
տեսնէ եղեր , արհամարհողին ի՞նչ , թէ որ հրեշ-
տակն արհամարհեալ մարդուն սլաշտանութեանը
յանձնառու եղած չէ : Եւ Աստուծմէ իր պաշտ-
սաննելոյն համար շնորհք մը ուղէ և առնէ նէ՝ շնոր-
հատու ըսուի ալ նէ՝ (որովհետև Աստուծմէ առա-
ծը մարդոյն տալու համար այս բառով կընայ կոչ-
ոիլ , թէպէտ մինչեւ հիմա ոչ հրեշտակի և ոչ
սուրբի մի այս անունս տրուած չէ) , տուած շնորհ-
քը իրմէն ըլլալը ո՞ւրկէ է լըսեր պատասխանա-
տուին այս բանս սորվեցնողը : Հրեշտակներուն մար-
դոց հետ ունեցած յարաբերութիւնը այս վկայու-
թիւնով սորվեցաք , ասոր ինչ յարաբերութիւն
ըլլալն ալ սուրբ առաքեալը կ'ըսէ , բայց անանկ
կերպով մը՝ որով կ'իմացնէ թէ ամէն մարդու
դիտցածն է իր ըսածն ալ . « Ո՞չ ասպաքն հողիք
են հարկաւորք որ առաքին՝ ի սպասաւորութիւն վասն
այնոցիկ որ ժառանգելոց են զիրկութիւն » (Երր .
Ա. 14) : Փրկութիւն ժառանգելու մարդոց բով

ինչ ընելու կը զրկուին ասոնք : Դժուար հասկնա՞լու բան մի չէ : Մարդուս փրկութիւնը աստուածային շնորհ մ'է , չը գիտեմ թէ բողոքականք ասիկայ կ'ընդունի՞ն թէ չէ , բայց դուք այս կողմէն անոնց համամիտ չէք երևիր : Հրեշտակները՝ փրկութիւն ժառանգելու մարդոց համար Աստուծոյ կողմէն կը զրկուին նէ՝ այն շնորհը կը բերեն Աստուծմէ . բայց իրենցմէ չէ : Այս երկու միկացութիւնս բաւական ըլլայ ձեզի խմացնելու որ հրեշտակներու և սուրբերու միջնորդութեամբ Աստուծմէ շնորհք կ'ստանամք ըսելնիս ալ սուրբ գլոց հայուակ չելաւ :

Սուրբ գրոց վարդապետութեան մէջ առնանկ բաներ ալ կան եղեր որ հայոց Եկեղեցին դուրս մնացեր են անոր սորվեցուցածներուն հետ յարմարութիւն չունենալով . և ասոնց առաջին կը դնէ « Միլոտութիւնը՝ յաւաղանէ ծնանիլը , Աստուծմէ ծնանիլէ » ըսելը : Այս խօսքը քանի որ՝ սուրբ աւետարանին պատմածին նայելով՝ Տեառն մերոյ ըսածն է . ի՞նչ չէս կ'ըլլայ որ ասիս կոյ ըսողը աւետարանի վարդապետութենէն բան դուրս կը ձգէ կամ այս ըսելը սուրբ գրքին ո՞ր խօսքին հետ յարմար չէ եղեր : Մեր կ'ըսեմք . յաւաղանէ ծնանիլը վերստին ծնանիլէ վասն զի Տէրն մեր ըսաւ թէ՝ « Եթէ ոք ոչ ծնցի վերստին , ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ » (Յովհ. գ. 3) . Նիկողիմոս չհասկաւ վերստին ծնունդն ինչ ըլլալը , ալէտք եղաւ բացատրել , ուստի կը թ-

նեց Տէրն մեր և ըստ « Եթէ ոչ ոք ծնյի ՚ի ջրոյ
և ՚ի Հոգուց . ոչ կարէ մտանել յարբայութիւն Առ
տուծոյ» (Անդ . 5) այս է մեր դիտյածը , մկրպ-
տութեամբ վերստին կը ծնանիմք , սկզբնական մեղ-
քէ կ'աղատիմք , նոր արարած կ'ըլլամք : Սուրբ
զրոց խօսրին միտքը Ա. Լուսաւորիչ հայրը այսակէս
սորովեցոց մեզիր . « Յորժամ ծագեաց Տէրն մեր
Յառաւ Քրիստոս արդարութեան արեգակն և աշ
« Խարհի փրկիչ , կատարեաց և ելլոց դաւաջին օրի-
« նակին զալակասութիւնն , զի երաց զնոր շնոր-
« հաց զիենաց զրունակ ՚ի ձեռն աւաղանին լուսա-
« արտութեան , ուզիղ հաւատով յամենասուրբ եր-
« րդրկութիւնն : Մեռանել զմելոց մահն ՚ի ջուրն
« մկրտութեան . և ընդ Քրիստոսի յարուցեալ ՚ի
« նորոգութիւն կենաց կալ մաալ (ըսել է . ջրով
« մկրտուելով նոր արարած ըլլալ) : Որ թէսկէտ և
« մեռանին , կենդանի է ՚ի յոյս կենացն յաւիտե-
« նից : Եւ մերկացեալ են զիին մարդն , որ վրէժ-
« ալընդրութեան օրինացն պարտական էր , զի դՔը-
« րիստոս զգեցան զիերազարանս որդէզըստեանն
« ասաին , և ժառանգորդք եղեն Քրիստոսի : Առ-
« նաւանդ որ զճշմարիտ հաւատս և զուզիղ վարս
« մինչև ցլախճան սլինդ ունիցեն յուսովն Քրիստո-
« սի , զի յոյս նոցա ընդ Քրիստոսի է յարուցեալ .
« և ընդ Քրիստոսի նստի ընդ աջմէ մեծութեան ՚ի
« բարձունս » (Յաճախ . ճառ . Ժ. Նրես 184) : Առ-
կեց աւելի ինչ կուղէ սլատասիսանատուն . բայց
միացն մկրտութեան ջրով սկզբնական մեղաց ողբ-

բուկը և նոր արարտած ըլլալը չուղէր . սակայն ի՞նչ
ընենք : Խորհուրդը սահմանովն անանկ է ըրեր . և
մեզի քրիստոնէութիւն սորվեցնովն անանկ է սոր-
վեցուցեր : Ասոր վրայ կրնացինք քիչ մի ալ եր-
կար խօսիլ , բայց արդէն խօսքերնիս երկարեցաւ ,
և տակաւին ուրիշ բաներ ալ ըսելու կ'ստիալէ ըզ-
մեզ պատասխանառուն : Ուստի թէ որ կուզէր նէ՝
ջառ միրտուրեան մակադրով Զամաւրմեան սլատ-
ուելւոյն շինած և տալել տուած տետրակը կարդա-
ցէք : Բողոքականներուն ջառ միրտուրեան և վե-
րլատին ժենդեան մակադրով Խղմիր տալուած տետ-
րակն ալ կրնաք կարդալ որուն խեղճ հեղինակին
ճարը հատնելով աւետարանին մէջ 'ի շրոյ բայրը
աւելորդ կը սեալէ միայն մէկ անգամ մի զրուած
ըլլալը պատճառ բերելով . և այսպէս սուրբ զիրքը՝
որուն խօսքէն դուրս չելլել կը խոստանայ . սրբադ-
րելու կ'ելլէ իր կարծեացը համաձայնեցնելու հա-
մար , և այն ատենը կը հասկնաք որ՝ որու կը յար-
մարի ձեր պատասխանուին ըսածը թէ՝ « Այն վար-
դապետութիւնները , որ ինչովէս ըսինը չեն կրնար
համաձայնիլ սուրբ զրոյ վարդապետութեանց , և
նոյն իսկ մարդկոցին կարճ տեսութեան առջև ըն-
դունելութիւն գտնելու յարմարութիւն շունին .
եկեղեցւոյ մէջ մտնելով , դուրս ըրեր են անկէ մի
քանի վարդապետութիւնը որ սուրբ զրոյ մէջ
սրարդ կը տեսնուին . և կարեւոր կը ցուցուին վըր-
կութեան » : Մենք սկիզբէն 'ի վեր տեսանք և ցը-
ցաւցինք որ եկեղեցւոյ մէջ սուրբ զրոյ հակառակ

վարդապետութիւն մտած չէ . ուստի ոյս խօսքը
շիտկելու համար մէջէն միայն եկեղեցւոյ բառը վեր-
ցընելու . և տեղը բաղրամանաց դնելու է :

Ա . Գրոց վարդապետութենէն ետ ձգուած կը
կարծէ «վարդապետաւթիւնը ճրի շնորհօք արդա-
րանալու » : Զլի շնորհօք արդարանալը՝ թէ որ բա-
րի գործ գործելու համար տրուած շնորհաց դօրու-
թեամբ առաքինի վարք վարելով արդարանալը
սլիտի հասկանաց նէ՝ այս վարդապետութիւնը հայր
դուրս ըրին ըսելով զբարարութիւն կ'ընէ . և սաոր
համոզուելու համար՝ Ա . Լուսաւորչին վիայութեա-
նը կարօտ չեմք , տասներորդ դարէն ետքը հայ
վարդապետաց խօսքերը բաւական են . Ես հոս Հա-
ւաստով խոստովանիմէն տուն մը բան սլիտի բերեմ
զոր տասն և երկու դարուն մէջ Ա . Ներաէս շնոր-
հալի հայրապետը յօրինած է . և ամէն հայ դիտէ:
«Արքայ երկնաւոր տուր ինձ զարգացութիւն քո
«զոր խոստացար սիրելեաց քոց և զորացո զաիրտ
«իմ ատել զմեղս և սիրել զքեղ միայն և առնել
«զկամս քո » : Թէ որ ճրի շնորհօք արդարանալ
միայն Քրիստոսի փրկարար չարչարանաց արդիւնքը
բաւական սեպել և բարեգործութեան հոգ չը տա-
նիլը կը հասկնայ նէ՝ ատիկայ մեր ընդունելու վար-
դապետութիւնը չէ . մենք Լուտերի չեմք կրնար
հետեւիլ որ Յակոբոս առաքելոցն կաթուղիկէ թուղ-
թին մէջ կարդալով թէ «Հաւատք առանց դործոց
մեռեալ են » (Յակոբ Բ. 20) . սուրբ առաք-
էալն աչքէն ինկառ և անոր նամակին արհամարհե-

շով սուրբ գրոց կարգին հանեց : Հիմայ դուք տե՛ս սէք թէ իր մտքին համաձայն չեկած խօսքը սուրբ գրոց վարդապետութենէն դուրս հանողը ո՞ւր կը դանուի , և ձեր քարողիչ և մեղի սլատասխան տը ւող եղրօն ալ ցըցուցէք :

Քրիստոսի միջնորդութեան և բարեխօսութեան վարդապետութիւնն ալ սուրբ գրոց վարդապետութենէն հայր դուրս ձգեր են ըսելն ալ զրաբարտութիւն է : Մենք միշտ առ Քրիստոս կը դիմենք՝ ընդ Հօր համագոյ Աստուած ճանչնալով , և սուրբերը առ նա բարեխօս բռնելով՝ Սրբոց բարեխօսութեան համար պէտք եղածը զրած եմք . կրնա՞ք գտնել հայու մի գրքի մէջ՝ որ յայտնի խօսքով այս վարդապետութիւնը մերժէ : Հոս հարկ կը սեպեմ բողոքականաց ոմանց ծուռ հասկըցած մէկ խօսքին միտքը բացատրել : Իրենց ըսածը հաստատելու համար Պօղոս սուսքելցն սա խօսքը կը բերեն որ ըսած է . «Մի է Աստուած և մի միջնորդ Աստուածոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս » (Ա. Տիմ . Բ. 5) . և միջնորդ բառը բարեխօս կը հասկնան . բայց անհանկ չէ : Քրիստոս միանդամայն Աստուած էր և մարդ , մարդ ըլլալովն զմարդիկ և Աստուած ըլլալովն զԱստուած իրարումօտեցնելով և մարդկութիւնը աստուածութեան հետ հաղորդելովն է որ միջնորդ կ'ըսուի : Քրիստոսի բարեխօսութիւնը ուրացող չեմք . Յովհաննէս աւետարանիչը մեղ սովորեցուցած է ասիկայ ըսելով և Եթէ մեղիցէ ոք՝ ունիմք բարեխօս զՅիսուս Քրիս-

տոս զարդարն և զանարսատն , և նա է քաւութիւն
մեղաց մերոց » (Ա. Յով . Բ: 1) : Զեմք ըսեր որ
որբոց բարեխօսութիւնը Քրիստոսի բարեխօսութե-
նէ անկախ է . այլ մինակ Քրիստոս բորեխօս է՝ ուր-
բոց բարեխօսութիւն չկաց ըսելը չեմք ընդունիր :

Մինչև հիմոյ մոլար կարծած վարդապետու-
թեանց արդիւնքն ըլլալով քանի մ'ալ սրարողու-
թիւններ գտեր է . տեսնենք թէ ասոնք ինչ են :

Ա. Պատուարազը կամ հաղորդութիւնը : Ասոր
վրայ կ'ըսէ . « Հստ սահմանադրութեան տեսուն
մերոց Յիսուսի Քրիստոսի հաղորդութեան Ս. Խոր-
հուրդը ոչ այլ ինչ է՝ բայց եթէ յիշատակութիւն
մի քաւչարար սրատարագին . որ կատարեցաւ ՚ի
վերայ խաչին . զոր պիտոր կատարեն քրիստոնեացը
դՔրիստոս յիշելու . ոչ թէ զոհելու համար :
Տէր Յիսուս կ'ըսէ . ասիկայ ըրէք զիս յիշելու հա-
մար , բայց եկեղեցիդ դՔրիստոս կը սրատարագէ ,
ըսել է կը զոհէ զայն սեղանին վրայ , որտէս թէ
խաչին վրայ վերստին կը մեռցունէ » : Այս ըսելին
ետքը արարողութիւնը անխմանտի ըսելով խոտոր-
նակ դատումներ ալ կ'ընէ . բայց այս տոթով հա-
յերէն քառի մը մէկ նոր նշանակութիւն մի ոտքրե-
ցուց մեզ . հաղորդորիւն քառով յիշատակորիւն հաս-
կընալու է եղեր , անդրադարձարար յիշատակորիւն
ըսելն ալ հաղորդորիւն կը համենամք , և այս ալ
յատկապէս այն արարողութեանց մէջ՝ զորս ինքն
Տէրն մեզ պատուիրեց : Նոյինք ուրիշ անգամի ալ
կը յարմարի՛ մի ասիկայ : Տէրն մեր աշակերտաց

ոտքերն լուսակէն ետքն անոնց ըստւ . « Օրինակ
մը ետու ձեզ , զի որպէս ես ձեզ արարի՝ և դուք
առնիջիպ » . (Յով . ձ. 9 . 15) : Ոտնալուայն ալ
հաղորդութիւն է : Մենք Հաղորդուրիւն բառով բա-
նի մը հաղորդ կամ մասնակից ըլլալ կը հասկնակի ,
և մէկ բան մը յիշատակելը անոր մասնակից ըլլալ
չէ . պէտք էր իմացունել թէ ինչ բանի մասնակից
ըլլալու է : Տէրն մեր « Զայս արարէք առ խօյ յի-
շատակի » ըսելէն առաջ բան մի ըստւ՝ զոր պա-
տասխանութուն իր վարդապետութեան կարգին
յարմարցնել չիրնալով դուրս ձգեր է , բայց մեր
իրեն կը յիշեցնեմք . « Առէք կերայք , ըստւ , այս
է մարմին խմ » և բաժակով դինին առնելով տուռա
և ըստւ . « Արքէք 'ի գմանէ ամենեքեան , զի այդ
է արիւն խմ նորոյ ուխտի , որ 'ի վերայ բաղմաց
հեղու 'ի թողութիւն մեղաց » . (Մատ . 19. 26-28) ,
Բայց լոկ այնակէս սեղանին վրայէն առնելով անմի-
ջապէս անոնց չտուռաւ . այլ Ա . Աւետարանը կ'ը-
սէ , օրհնեաց և ետ . գոհացաւ , ետ նոցա . և այս
զոհութեան և օրհնութեան « երեկ » կտրեց
ալ կ'ըսէ . և այս օրհնութեանը և հացը բեկելուն
և ուտելուն և գինին ալ խմելու տալուն յիշատակին
է , զոր ընել կը պատուիրէ Տէրն մեր : Թէ որ լոկ
խաչին վրայ կատարուած քաւչարար պատարագին
յիշատակին ըլլար , և հաղորդելու բան չըլլար նէ:
ոչ հաց պէտք էր և ոչ գինի . ուրիշ կերալով ալ
նոյն յիշատակը կրնար ըլլալ . բայց ոյս հայն
ու գինին ինչ էր : Յողոքականք կ'ըսեն թէ Քրիս-

տոսի լսաչելուն յիշատակն էր, բայց մինսկ այս
քանով չը լմնար. պիտոր ըսէ՞ որ Քրիստոսի
բուն խակ իր մարմինն էր և ոչ օրինակը՝ կամ լոկ
յիշատակը, ինչպէս որ Տէրն մեր ըսաւ, «Մոր-
մին խմ ճշմարիտ կերակուր է, և արիւն խմ ճշմա-
րիտ ըմակելի է» (Յով. 9. 56). և այս հրեանե-
րուն ըսաւ որ իրարու հետ կը մարտնչէին և կըսէին
թէ ի՞նչպէս իր մարմինը կրնայ մեղ ուստելու տալ:
Խնդն ալ Քրիստոսի ըսածին հաւատայ նէ հայոց ե-
կեղեցւոյ պատարագի արարողութիւնն ալ կ'ընդու-
նի. որ ամէն քրիստոնէից համաձայն է. մանաւանդ
այս մասին : Զհաւատար նէ՝ Ա. Գրոց վարդապե-
տութեան իրեն կարծեաց յարմար չեկածը դուրս
ձգողներուն կարգը թող անցնի : Այս նիւթոյ վը-
րայ թէև երկար պիտի խօսէինք բայց արդէն Տե-
րոյենց Յ. Պատուելույն ձառ հաղորդութեան անուն
տետրակներուն մէջ լիապատում գրուած տեսնե-
լով, այսչափ մը հոս գրել բաւական համարեցինք,
ուղողը կրնայ յիշեալ տետրակներէն լիուլի տեղե-
կութիւն ստանալ այս նիւթիս վրայ :

Յ. Ալլուտութեան Ա. Խորհուրդը անշահ կեր-
պով կը կատարուի եղեր. ինչո՞ւ համար. վասն զի
«լուսաւորչական եկեղեցւոյն ըսածին նայելով»,
«նովաւ աղատի մկրաեալն 'ի սկզբնական մեղաց .
('ի բարոյական ապականութենէ) և լինի որդի Առ-
տուծոյ»: Եւ ասանկ ըսելով լուսաւորչական եկե-
ղեցին Ա. գրոց հակառակ և յոյտնութեան ոգւոյն
անհամաձայն է եղեր. խակ բողոքականիք՝ որ ասոր

հակառակը կ'ըսեն համաձայն են եղեր : Ասոր ու
րիշ բան չեմք ըսեր , բայց միայն թէ բառերն ալ
զիրենք գործածող բողոքականաց բերանն անցնե-
լով նշանակութիւննին փոխեր են . և նոր բառարան
մը շինել պէտք կ'ըլլաց ի պէտու բողոքականաց .
ձեզ համար վերն ըսածնիս բաւական է : Մկրտու-
թեան կատարուելուն կերպին մէջ պակասութիւն
կը գտնէ , 'ի ներկայութեան սակաւաթիւ անձանց
գաղտուկ կատարուիլը . որ թէ որ մէկ մարդ մ'ալ
դտնուի նէ՝ գաղտնի չըլլար . ուրիշներն ալ կրնան
ներկայանալ : Այն սակաւաթիւ ներկայ գտնուող
առձինք ալ բան մի չեն հասկնար ըսեր է պատաս-
խանատուն . բայց ինչչո՞ն գիտցեր է հասկնալնին
կամ չհասկնալնին : Մկրտելոյն ծնողքը իրենց
սկարտքը կնքահօրը կը յանձնեն , և նա ալ իրենց
պէս չը գիտէ թէ ինչ ուխտ կ'ընէ կ'ըսէ . ըսել է
որ մկրտեալ տղային ծնողը ուխտ ունի եղեր ընե-
լիք . և կնքահոյրը կ'ընէ եղեր այն ուխտը փոխա-
նորդաբար : Ի՞նչ է այս ուխտը՝ զոր պիտի ընէ մը-
կրտելոյն հայրը . և ո՞ւր զրուած է այդ ուխտին
պատճէնը . պատոսխանատուէն կը խնդրեմք որ իր
վարպետներէն սովորի և մեզ սովորեցնէ :

Գ . Անշահ արարողութիւններուն կարգը դրած
է եկեղեցւոյ զարդարանքը և պաշտաման չքեղու-
թիւնը : Արդեօք ասո՞նք ալ Ս . Գրոց հակառակ
գտած է : Հին օրինաց ատենը Խորան վկայութեա-
նին վարագոյրներուն և ուրիշ կաղմածներուն հա-
մար զրուածները՝ զոր Աստուծոյ խօսք ըլլու կը

դաւաճիք անցուցո , կարգալու էր Ելից դրբին մէջ .
նոյնպէս եօթնաստեղնեան աշտանակը , բռւրուառ
ները , որոց մէջ ոսկիէ շինուածները կարդացէք և
ըսէք մեզ թէ Խորան վկայութեանին համար ա
ռանկ դարդարանք սկասուիրող Աստուածը ե՞րբ
սկասուիրեք է որ քրիստոնէից Եկեղեցւոյն մէջ չըլ-
լոյ : Պաշտաման շքեղութիւնն ալ Ս . Գրոց մէջ
յատուկ հրամայուած կայ : Աստուածային սկաշտօն
ամէն օր ըլլալու է . բայց Աստուածոյ յատուկ բա-
րերարութիւնները յիշելու համար օր յատկացոց
Աստուած խորայէլացւոց . ինչպէս որ գրւած է
Դեմայցւոց ԽՊ . և Բ . Օրինաց ԺԸ . դլուխները . և
այն օրն աստուածային պաշտօնը ուրիշ օրերուն
պէս չէր ըլլար . և ոչ ալ փող կը դարձու էր ամէն
օր . այս ալ պաշտաման շքեղութիւն մըն էր որ
իրեն յատուկ ժամանակ ունէր . և Աստուած հրա-
մայած էր օրն ալ նշանակելով . « Փող հարէք 'ի
դլուխս ամացոց , յաւուր նշանաւորի տարեկանաց ձե-
րոց . հրաման է այս խարայէլի » . (Սաղ . Զ . 4-5) :

Դ . Եկեղեցական ընթերցուածոց մէջ ժողո-
վրդեան չհասկցած լեզուն գործածեն ալ հայոց
Եկեղեցւոյ սկակասութեան կարզը կը դնէ : Ասոր
վրայ կ'ըսեմ՝ որ ժողովրդեան հասկցնելու համար
Եկեղեցին յատուկ պաշտօնեայներ ունի , և քանի
որ ասոնք կան՝ աղջային կին լեզուին վեհութիւնը
կըստնցնելով անոնք ռասմկօրէն անկատար և անշնորհ
լեզուի թարդմանել չորժեր , մանաւանդ որ ան-
հաստատ լեզու մըն է . և ժամանակ մը ետքը ոյս

ալ ռասմին անհասկանալի կրնոյ ըլլալ, ինչպէս որ հիմայ գրաբարը եղած է : Գրաբարը հասկցող և Ա. գիրքը տուանց տուաջնորդի կարգացողները ծուռ հասկնալով կը մոլորին ալ, որ հոգւոց վեաս է . և ասոր օրինակներն ամէն օր կը տեսնեմք . մանաւանդ հաւատքնիս անմիջապէս Ա. գրքէն սլիտի սոլրինք ըստղները , որոց կարդացածք նոյն , բոյց հասկացածներնուն վրոյ միաբան չեն :

Ա. Պաշտաման սահմաննեալ ձեւ կամ տւոր պատշաճի արարողութիւնը կատարելն հայոց եկեղեցւոյ մէջ դառնուած և բողոքականաց մոլոր կարծած վարդապետութեան հետեւութիւնն է եղեր . և ասոր սպատճառոց զարմանալի է . որով կերալով մի իրենց օրը կերալ մի դառնութիւնն հնարելնին արդարացնելու պէս կ'ընեն : Անոնց բերանը խրեւ վոյլ առանց ըստածին հաստալութիւնը հասկնալու հնչող պատդամուոր սպատախանառուունիդ ըսեր է , և Տարին տասներկու ամիս առուր սպատշաճի ընթերցմունքներ սոհմաննեալ են , մինչեւ խող քարոզներն զօրս ժողովուրդն այնքան անդամ լսեր է , որ ացւ ես չկրնար մտողիր լինել տաղակութեան սասակութենէ : Կոյն բանը հարիւր անդամ կը լսէ , հազար անդամ կը տեսնէ , մինչդեռ բան մի լսած , կամ հրտհանդ մը ընդունած չէ վարդապետութեանց վրայ , որ փրկութեան կարի հարկաւոր են . Այս վերջին կոտորը այն միտքը ունի , որ իրենց կարի հարկաւոր կարծած հրահանզը չեն առած՝ վրեկութեան վրայ : Մեք կ'ըսեմք որ ոյզդպիսի հրա-

հանդիները զորս իրենք տալ կուղեն ազգին այսպիս սի կերպով, փրկութեան կարի հարկաւոր չըլլոյէն շատ կարի վասակար են, զոր մինչև հոս գրածներովս հասկցած էք : Մի և նոյն բանը յաճախ լըսելը ձանձրութիւն տալուն համար հոյոց եկեղեցւոյն յիշեալ սովորութիւնը շհաւնողը հարկաւ սուրբ աւետարանին մէջ կարդացած կ'ըլլոյ թէ ո Պտրտէ յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ (Պուկ. ԺԷ. 1) և այն ալ գիտէ որ Տէրն մեր մէկ աղօթք մը սորվեցուց աշակերտներուն, ասիկայ բանի տեղ ըլ դնելէն ետքը հարկաւ սրբոյն Պօղոսի տուած խրատն ալ արհամարհելով պիտոր մերժէ և այնպէսով պիտի պարծի որ իրեն վարդապետութիւնը և բռնած ճամբան Ա. Գրոց համաձայն է . և ահա Ա. Առաքելոյն խրատը . « Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս և զրաժակս ըմպեցէք զմահ տեառն պատմեսջիք մինչև եկեսցէ նա » . (Ա. Կոր. ԺԷ. 26) : Այս պատմութիւնը որ ամէն օր կ'ըլլար, որովհետեւ ամէն օր պատարագ կ'ընելին և կը հաղորդէին, ինչպէս կը պատոմէ Ա. Գիրքը . (Գոր. Բ. 42), արդեօք չէ՞ր ձանձրացուներ ներկայ գտնուողները : Իրենք որքան օր (ժողովուրդնին չձանձրացնելու համար) նորանոր բաներ կը հնարեն նէ հաւատոյ և կրօնական արարողաթեանց մասին՝ զոր խիստ քիչցուցած են : կարողացած են որդեօք իրենց նպատակին հանիլ : Բայց մեր ալ ասանկ անոտի առարկութեան մը համար երակար խօսեցանք :

զ. Պակասութիւն հայոց եկեղեցւոյն կարծերէ
են կիւրակէ սլահելն 'ի պատիւ որբոց : Մեր եկե-
ղեցին 'ի սլատիւ որբոց կիւրակէ սլահել չունի .
միայն Սիմէռն կաթուղիկոսը պատուիրած է Ա. Լու-
սաւորչին Գիւտ նշխարաց տօնին օրը , և ասիկայ
ըստ որում ուղիղ հաւատոյ և բարի վարուց դէմ՝
բան չէ , և կարգադրողը այդպիսի բան մի կար-
գադրելու իշխանութեան տէր է , ընդունուած է :
Նրոց Վարդանանց օրը կիւրակէ բռնելը քանի մի
բարեսպաշտ՝ բայց տանել իշխանութիւն չունեցող
մարդոց մտածածն ըլլալով , ընդունուած չէ եկե-
ղեցին . բայց երբ Վեհ . Կաթուղիկոսն հաւանու-
թիւն տոյ՝ դժուարութիւն չի մնար :

Ահա հայոց եկեղեցւոյն մէջ այն վարդապետ
տութիւնները՝ որք Ա. Գրոց խօսքին հակառակ և
յայտնութեան ոգւոյն անհամաձայն ցըցուցեր են
ձեղ ձեր . վարպետները և ահա անոնց հետեւութիւն-
ները՝ որոց դուք պատասխանելու կարող չըլլալով
բռնուեր էք կարծելով թէ յիրաւի անհերքելի փաս-
տեր են . այս տեղս տեսաք որ ձեր վարպետնե-
րուն դրութիւնը Ա. Գրոց խօսքին հակառակ է , և
միայն մոլորութեան ոգւոյ մը յայտնութեան համա-
ձայն է , որոց համաձայնելին Աստուած պահէ զմեղ .
ինչպէս որ մինչև հիմոյ պահեր է . և ձեղ ալ՝ որ ան-
գիտաբար և գուցէ աշխարհական նպատակաւ մը
և կամ ազգային անօդուտ խնդրով մը բռնուած
էք : Թէ որ այս վերջինս է նէ բռնուելնուդ
սլատուառը՝ մտքերնիդ կը ձգեմ Տեառն մերոց


ըստծը . « Զի՞նչ օգտիցի մարդ եթէ դաշխարհ
շահեսցի և զանձն իւր տուժեսցէ . կամ՝ զի՞նչ
տացէ վրկանս ընդ պնձին իւրում : (Մատ . Ժ. 24) : Մտքերնիդ կը բերեմ՝ սուրբ մարտիրոսները՝
որ եկեղեցւոյ սովորեցուած հաւատոքը ուրիշ հա-
ւատի հետ չը վախելու համար ամէն տեսակ զըր-
կանք և հարատահարութիւն և նախատինք և տան-
ջանք և մինչև դառն մահ կրելու յանձնառու եղան
Մեր ազգին սեսլհական յատկութիւն մը ճանչցուած
է հաւատոյ վրայ հաստատութիւնը . և ասով դուք
յայտնի կընէք որ ձեր հոգւոյն վրկութեանը հոգ
շընելնէդ զատ ազգային ոգիէն ալ օտարացեր էք :

Պատասխանւոյն վերջը վրկարար շնորհաց վրայ
խօսքեր կացին . որոց վրայօք խօսելու կարևորու-
թիւն մը տեսնէի նէ խօսքին երկարութենին չէի
փախչեր : Ասոնց մէջ թէտէտ մոլորութիւններ կան.
բայց հոս ըսելիքներուս ուշադրութիւն ընէք նէ այն
մոլորութիւններէն ալ կազատիք : Աստուած մեղ իր
շնորհօքը մկրտութեան արժանի ընելով Աղամէն
ժառանգութիւն մնացած մեղքէն աղատեր է և Աս-
տուծոյ արքայութիւնը առեր է որ է եկեղեցին ,
անոր վարդապետութեամբը վրկարար հաւատք և
աստուածահանոյ գործքեր ունենալու վիճակի մէջ
դրեր է . և ասոնք ամէնն ալ ձրի , որովհետեւ ա-
ռաջուց ասոնք ալ ստանալու արժանիք մը շունէինք:
Բայց մեղնէ ալ կը սկահանջէ որ այս շնորհը յար-
գենք , և տուածնուս պէս ձգենք նէ ահազին դաստա-
պարտութիւն սալառնացեր է այն ծառային առակա-

վը օր տիրոջմէն առած ստակը շահեցնելուն տեղը տարաւ անգործաթիւան խորը թաղեց . և հաշիւ տուած ժամանակը սա տակալի վճիռը խեց . « Զծա ույդ անոլիսան հանէք ՚ի խաւարն արտաքին , անդ եղիցի լու և կրմել ատամանց » (Մատ . ԽԵ . 30) :

Եկեղեցին մեզի անսխալ առաջնորդ է , որուն մոմիկ չընողը հեթանոսի պէս պիտի ըլլայ՝ որուն համար փրկութիւն չըլլար . ասիկոյ Տեառն մերոյ խօսքրն է (Անդ . ԺԸ . 17) : Եկեղեցին չը սխալիր , և ամենայն ծշմարտութեամբ անոր առաջնորդը Հոդին սուրբ Աստուած է , և կը սխալի ըսելն ընդոդէմ Հոգւոյն սրբոյ հայհոյութիւն և անքաւելի ըլլալը խօսքերնուս կարգովը ձեզի խմացուցինք : Եկեղեցին աշխարհիս վրայ և միշտ տեսանելի է . աներեւոյթ բան մը անլսելի ալ կ'ըլլայ . և անլսելի ըլլալովը հաւատալի ալ չըլլար . բայց դուք առաքելական հանգանակը կ'ընդունիք զոր Ա . Լուսաւորիչը Նիկիոյ ժողովքէն ընդունելով մեզի աւանդեց , այն ալ կը սորվեցնէ մի և սուրբ և ընդհանրական եկեղեցւոյ հաւատալ : Հարկաւոր է բարեգործութիւնն ալ ձեռքէ չի ձգել , և չը հաւատալ միայն հաւատգով մարդ կը փրկուի ըսողներուն , սաւրբ զրոց հակառակ խօսքերուն մէջ ամենէն վտանգաւորն ասիկայ է : Այս ամէնս գիտնալով թէ որ տակաւին այդ մոլար ճամբան բռնէք երթաք նէ՝ հանգերձեալ աշխարհը կրելիք պատիժներնուուդ ծանրութիւնը մտքէ մի հանէք . « Ծս ռայ որ զիտիցէ զկամս Տեառն իւրոյ և ոչ պատրաստես »

յի ըստ կամաց նորա, արբցէ գան բաղում» (Ղուկ.
ԺԲ. 41) ամենողովով Աստուած իւր շնորհիւը մեզ
այդ սպառնալիքներէն պահէ, և յաւ խոենական
կենաց և փառաց արժանի ընէ, ամէն :



ՎԵՐՋ

